



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



178 ✓

ԱՐՆԻՆԻ, ԵՆՆ ԽՆԴԻՐ

Տաճկաստանու եւ Ռուսիոյ
բարդատութիւնը
ուսումնականութեան եւ կրթութեան մասին :
Ռուսաց
սկիզբն ու լեզուն եւ իրենց
կառավարութեանը տակ ըլլող
ժողովրդոց վիճակը :

ԹԵՐԳՄԵՆԵՆՅ
Ի ԳԱՂՂԻԱԿԱՆ ԼԻԱԳՐԷ
Ե. Լ.



ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԼԻՍ
Ի ՏՊԵՐՄԵՆԻ ԿՈՅՆԵՆ ԵՂԵԲՆԻՈՅ
1853

6433 p. 4.



۱۳۳۳

ՆՐԵՒՆԵԼ ԵՆՆ ԽՆԴԻՐ

Ռուսիոյ դէմ Տաճկաստանը պաշտպանել՝
բարբարոսութեան դէմ կրթութիւնը պաշտպանել է :

Ռուսիոյ դէմ Տաճկաստանը պաշտպանող օտարականները՝
կարծես թէ՛ բարեկրթութեան խնդիրը յառաջ բերելու չեն հա-
համարձակիր : Սակայն , Օսմանեանց և Ռուսաց վեճին մէջ գըւ-
խաւոր նիւթը այն է որ՝ Ռուսիոյ դէմ Տաճկաստանը պաշտպա-
նելով՝ բարբարոսութեան դէմ բարեկրթութիւնը կը պաշտպա-
նեն :

Եւրոպիոյ մէջ խօսք կ'ըլլայ Ռուսաց գրականութեանը , երա-
ժշտութեանը , պատկերհանութեանը և արևուստականութեանը վը-
րայ , կ'ընդունինք և մենք՝ որ բոլոր ասոնցմէ գանուին քիչ մը
Չարաց (Ռուսիոյ կայսերք) լայնածաւալ կայսրութեանը մէջ :
Տայց մենք բանին բուն յատակը դիմելով՝ այս հարցմունքը կ'ը-
նենք , զոր օրինակ կը վայելէ ընել այսպիսի ծանր նիւթի մը վրայ՝
որ բոլոր աշխարհք յուղելու առիթ մը եղած է այսօր : Մի թէ
Ռուսիոյ բնակիչք աւելի աղասութիւն կը վայելեն՝ չէ նէ Տաճ-
կաստանու : Մի թէ Ռուսիոյ մէջ ուսումնականութիւնը աւել-
ի ծաւալած է և բարեկրթութեան միջոցները աւելի բազմաթիւ
են՝ չէ նէ Տաճկաստանու : Իրօք ու հաշուով հաստատուեմք մենք
յիշեալ մասերուն մէջ այս յօդուածիս ճշմարտութիւնը :

Այն գործքերն ու հաշիւները զորոնք կը յիշատակեմք հաս կը ցուցրնեն որ ,

Ա. Ազատութեան մասին՝ ազնուականները , այն Պոյարները կ'ըսեմք որ գեղացւոց տէր են Ռուսիոյ ինքնակալութեան մէջ , անոնք անգամ այնչափ ազատութիւն չեն վայելեր որչափ կը վայելեն Տաճկաստանու Քրիստոնեայք :

Բ. Ուսումնականութեան մասին՝ Տաճկաստանու մէջ երեսուտն բնակչէն մէկը ուսանող է (քրիստոնեայ ըլլալով) , իսկ Ռուսիոյ ինքնակալութեան մէջ , հին 1/4 հաստանը և Պալթիկ ծովուն Շուէտոյ — Գերմանիոյ գաւառները միատեղ առնելով՝ վեց հարիւր բնակչէն ուսանող մը միայն կը հաշուեն :

Գանք հիմա մանրամասն տեղեկութեանց :

Տաճկաստանու քրիստոնեայք՝ Ռուսիոյ գեղացիներէն աւելի ազատ են չեմք ըսեր . վասն զի նոյն Տէրութեան գեղացիները երկիր վարող գերիներ (սէրֆ) են . մէկ խօսքով , ազնուականաց սեպհականութիւններն են , զորոնք կրնան ծախել , գնել , ընծայել ըստ իրենց հաճոյիցը : Այլ մենք կը հաստատեմք որ՝ Տաճկաստանու քրիստոնեայք աւելի ազատ են քան թէ Ռուսիոյ գեղացւոց տէրը ըլլող ազնուականները :

Ազնուական մը , Ռուսիոյ Պոյար մը , իւր վիճակէն կամ գաւառէն չի կրնար դուրս ելլել մինչև չի ծանուցանէ առաջուց տեղւոյն ոստիկանին իր ճամբորդութեանը պատճառը . և նոյն պատճառը կը յիշատակուի իւր անցագրին (բասաբօրթ) մէջ : Թէ որ անկարելի ըլլայ ճշմարիտ պատճառը յայտնել , այն ատեն ընդհանրաբար այսպէս կ'ըսեն . « անկան գործի համար » . և այս ոճը որչափ ալ անորոշ է , այսու ամենայնիւ կը գրուի անցագրին մէջ :

Ազնուական Ռուս մը կ'ուզէ՞ Տէրութեան աւելի հեռաւոր գաւառներէն մէկը կամ բուն մայրաքաղաքը երթալ , այն ատեն , հարիւր հազարէն աւելի բնակիչ ունեցող վիճակի մը կ'առաջարկը հրաման չունի անցագիր տալու , այլ պէտք է որ Նահանգին կուսակալին ծանուցանէ յառաջագոյն : Իժուարութիւնները կ'աւելնան երբ ազնուականը ուզէ օտար երկիր ճամբորդութիւն ընել . սովորական արդելքներէն և ոստիկանաց քննութիւններէն ՚ի զատ , 200 ըուպի (գրեթէ 4000 Սամանեան դուռուշ) արծաթի վճարելու

է արևուստանը թէ՛ իր՝ և թէ՛ հետը ըլլող անձանց ամեն մէկուն համար (կին, տղայ, ծառայ)։ Այսու ամենայնիւ եթէ զօրաւոր պաշտպանութիւն մը չունենայ, օտար երկիր ճամբորդութիւն ընելու հրամանը ոչ երբէք կրնայ ստանալ։

Մեր հոս ըսածները բոլոր աշխարհի ծանօթ՝ և նոյն կայսրութեան օրինաց գրքին (սլօտ զաքօնօֆ) մէջ յիշատակուած բաներ են։

Այսպէս Ռուսիոյ արևուստանները շարժելու անգամ ազատութիւն չունին։ Ասոնցմէ օտար տէրութեանց երկիր ճամբորդութիւն ընողները՝ կամ պաշտօնատէր են կամ Տէրութեան հաւատարիմ անձինք։

Ռուսիոյ արևուստանները չէ թէ միայն շարժելու՝ այլև ուսանելու իրաւունքէն անգամ զրկուած են։

Ռուսիոյ կայսրութեան մէջ ուսանելու ազատութիւնը՝ արտօնութիւն (բրիլլիէժ) ունեցող անձինք միայն ունին։ Առանձին տուներու մէջ ըլլող դաստիարակութիւնը անգամ կանոնի տակ ինկած՝ և ոստիկաններէ հսկեալ է, մինչև անգամ երբ գերդաստանի մը գլխաւորը տանը մէջ վարժապետ մը կամ վարժապետուհի մը առնէ իւր որդւոցը սովեցընելու՝ չէ՛ թէ միայն գիտութիւնները՝ այլ կարգալու և գրելու սկզբունքները, ու թէ որ այն վարժապետը կամ վարժապետուհին Տէրութենէ մասնաւոր հրամանագիր չունենայ, կամ դաստիարակութեան վերաբերեալ օրինաց պահանջները կատարած չըլլայ, թէ՛ տանուտէրը և թէ՛ վարժապետը կամ վարժապետուհին, երկուքն ալ սաստիկ տուգանաց տակ կ'իյնան, ուսանող մանկանց թուոյն համեմատ։ Երկրորդ անգամ նոյնը պատահելու ըլլայ նէ, տուգանքը կ'աւելնայ։ Իսկ երրորդին պատիժն է Սիպերիոյ սառուցեալ երկիրը քսորութիւն։ 1834 Տարւոյն օրէնքը խիստ բացայայտ է այս մասին, և առանձին տուներու մէջ ուսմանց սկզբունքներուն անգամ դաստիարակութեանը վերաբերեալ բազմաթիւ մասնաւոր կանոնադրութիւնները շատ աւելի սաստիկ են։

Մասնաւոր դասակցութեան (էնսդրիւքսիօն բրիլլէ) համար արտօնութիւն մը ստանալը խիստ դժուար է։ Վասնորոյ, 1848ին, Ռուսիոյ ընդհանուր կայսրութեանը մէջ՝, գրեթէ յիսուներ

1 Բաց ՚ի Աննայու ժողովոյն Ահաստանը ըսուող մասը։

ութը միջինն բնակչաց դաստիարակութիւնը հոգացող բոլոր վարժապետներուն կամ վարժապետուհիներուն թիւը երկու հազար հարիւր քառասունը չորս էն աւելի չէր, և 1849ին, երկու հազար հարիւր եօթանասունը չէր, և 1848ին, հազար հարիւր եօթանասունը չէր, և 1849ին, հազար երկու հարիւր տասներեօթը վարժապետուհի էին, որոնք, վարժապետներուն նման, դասակարգութեամբ (հիւրարշէքման) բաժնուած են :

Տղոց դաստիարակութեան պարապել ուղող երիտասարդաց քաջած դժուարութիւնները, կրած նեղութիւնները, մանաւանդ քննութեանց պատճառաւ, ոչ ոք կրնայ բնութենէլ, վասն զի ըստ սորին կարգի պաշտօնատէրք շատ աղէկ գիտեն, գիտէ անոնց հետ մէկ տեղ և բոլոր աշխարհք, որ տէրութիւնը չափաւորել կ'ուզէ միշտ ուսումնականութեան միջոցները, ուստի և ըստ այնմ կը շարժին յիշեալ պաշտօնատէրք : Տէրութեան վախը շատ աւելի է մանաւոր դաստիարակութեան վրայ : Նոյն կառավարութեան տեսուչին տուած հաշիւը, ուսկից կը քաղեմք և մենք, կը ծանուցանէ բոլոր Աւրոսիոյ թէ, Համալսարանաց (իւնիւէրսիթի) մէջ գանուող ուսանողաց թուոյն նուազումը տեսնուելով 1849ին, այնպէս որոշուեցաւ որ քսան մանաւոր դպրոց բացուի Դայն, ուստի նոյն տարւոյն մէջ յիշեալ դպրոցներէն քառասուն հատ դոցուեցան² :

Իսկ հասարակաց դպրոցներուն (էքօլ բիւսյէք) մէջ դաստիարակութեան մասին, պէտք է դիտել :

Ա. Ռուսիոյ՝ Տէրութեան գեղացիք ու քաղաքացիք (պուրժուա) գերագոյն ուսմունքները ստիբելու արտօնութիւն չունին, ասոնք չորրորդ դասէն վեր չեն կրնար ելլել : Այս մասին զարաուղութիւնները խիստ քիչ են, և այն՝ անհամար դժուարութեամբ լի, վասն զի, երիտասարդ մը, գեղացի կամ քաղաքացի, կրթութեանց ընթացքը շարունակելու հրամանը ստանայ նէ, ա՛լ անկէ վերջը ամեն տուրքէ կ'ազատի, և այս մասին, ազնուականաց արտօնութիւնները կը վայելէ, որոնք ամեն անձնական տուրքէ ազատ են : Սակայն և այս իրաւունքը Օւերակուտից ատեանը միայն կրնայ շնորհել :

1 Տես Ռուսիոյ հասարակաց տեսուչին օրագիրը, մայիս ամսոյն գեքը, 1850, երես 50 :
2 Նոյն երես 20 :

Բ. Մինչև 1849, ազնուականք կատարեալ արտօնութիւն ունէին ուսանելու. վասն զի կրնային ըստ իրենց հաճոյիցը ընտրել ուսմանց ճիւղերը և ուզածնուն չափ կատարելագործել զանոնք. Սակայն վերոյիշեալ տարւոյն կրկին հրովարտակները, Ա մայիսի և 26 սեպտեմբերի, նեղ սահմանի մը մէջ ամփոփեցին ուսմունքը, ազնուականաց համար անգամ. Այս հրովարտակները 300 ի սահմանեցին (բոլոր գրով գրենք, իրեք հարիւրի միայն սահմանեցին), թէ՛ ուսանողաց և թէ՛ ազատ ունկնդրած (լիպրը օտիդէր) թիւը, որոնք իրենց ծախքովը կը մտնեն Տէրութեան վեց համալսարանաց մէջ, որք են՝ գերագոյն ուսմանց, գեղարուեստից, Մաթեմատիքայի և Փիլիսոփայութեան համալսարանները (այս վերջինը մօտերս գոցուեցաւ). և նոյն հրովարտակները սաստկապէս կ'արգիլեն ուսանողաց նոր ընտրութիւն չընելու մինչև որ համալսարանաց մէջ գտնուողներուն թիւը երեք հարիւրի չիջնայ. նաև կը պատուիրեն որ համալսարան մտնողներուն թիւը ելլողներէն աւելի չըլայ՝:

Գործողութիւնը շուտով յառաջ վարելու համար, միայն 1849 տարւոյն մէջ, համալսարանի ուսանողաց թիւէն եօթը հարիւր յիսուսուն անձ պակսեցաւ²:

Բժշկութեան վարժարանի աշակերտաց թիւը չի սահմանեցին, ասոր պատճառը հասկընալ գիւրին է. բայց այս վարժարանէն ուրիշ դպրոցներու անցնիք արգիլուած է.

Ամփոփենք խօսքերնիս. Վերջապէս Տաճկաստանու բրիտանից և Ռուսաց մէջ եղած ազատութեան տարբերութիւնը յայտնի կ'երևի երկու տէրութեանց դպրոցներուն մէջ գտնուող երիտասարդաց թուէն. Մօսկովի մէջ, (բայց ՚ի Պալդիկ ծովուն Շուէտոյ—Գերմանիոյ գաւառները) ինչպէս ըսինք, վեց հարիւրէն աւելի անձանց մէկը միայն ուսանող է. ընդ հակառակն Աւրոպիոյ Տաճկաստանու մէջ երեսուն բնակչէն մէկը ուսանող կը հաշուեն.

Այս մասին Մօսկովի վերաբերեալ հաշիւները ընել գիւրին է, վասն զի Ռուսիոյ ազգային ուսման տեսուչը իւր կառավարութեանը վերաբերեալ հաշիւները կը հրատարակէ ամեն տարի. Ա

1 Նոյն երես 17-18:

2 Նոյն երես 141:

սոնցմէ շատ տարուան ծանուցագիրները քննեցինք մենք, և մեծ փոփոխութիւն մը չի տեսանք : Օօրօրինակ, Տեսուչը, 1850ին հըրատարակած գրովը զոր յիշեցինք, Ս. Բեթրպուրկի սահմանին (սէրքլը) թէ՛ հասարակաց և թէ՛ մասնաւոր դպրոցներուն մէջ տասնեօթը հազար երկու հարիւր ինը աշակերտ կը համրէ, մանչ ու աղջիկ : Մասքուայի սահմանին հասարակաց և մասնաւոր դպրոցներուն մէջ քսան հազար ինը հարիւր եօթանասուն երկու աշակերտ, երկու սերէ : այսպէս Խարքովի սահմանին մէջ տասնը մէկ հազար յիսունը եօթը աշակերտ : Խասանու սահմանին մէջ տասուիրեք հազար երեք հարիւր ինը աշակերտ, և Սիպերիոյ մէջ երեք հազար հինգ հարիւր քսանը չորս աշակերտ : Բնդ ամենը, յիշեալ հինգ սահմանաց մէջ, որոնցմով կը կազմուի Ռուսիոյ ընդհանուր կայսրութիւնը, բաց ՚ի հին Լեհաստանը և Պարզիկ ծովուն Շուէտոյ—Գերմանիոյ գաւառները, քառասուն միլիոն բընակչէն, 1849ին, թէ՛ հասարակաց և թէ՛ մասնաւոր բոլոր դըպրոցներու մէջ վաթսունը վեց հազար եօթանասունը մէկ աշակերտ կար միայն, մանչ ու աղջիկ :

Իսկ Լաբրուպիոյ Տաճկաստանու հաշիւները ընելով կը տեսնեմք որ, Սըրֆի գաւառին մէջ տասնըմէկ բնակչէն մէկը աշակերտ է¹, Վալաքիոյ և Մօլտավիոյ իշխանութեանց մէջ, Սըրֆի երկրէն աւելի ծաւալած են գերագոյն գիտութիւնները : Բուլղարի երկիրը, որ ուսումնականութեան կողմանէ քիչ համբաւունի, և թէպէտ այս մասին Սըրֆէն վար է, այսու ամենայնիւ ութսուն խրճիթ ունեցող գեղը դպրոց մը ունի : Այն ճամբորդ գութեան մէջ որ ըրինք մենք Դանուբ գետին բոլորախօր և Բուլղարի ներսերը ՚ի Եօլ-Ֆալանքա, ՚ի Թըրունօվա, ՚ի Շումլա, ՚ի Ռադղուաա, ՚ի Վարնա և այլն, ամեն գիւղի մէջ դպրոց գտանք, իսկ աւելի ընդարձակ քաղաքները բազմաթիւ դպրոցներ ունին թէ՛ սղոց և թէ՛ աղջկանց համար :

Ուստի Բուլղարի բնակիչներուն մէջ քառասունին մէկը միայն ուսանող է կ'ըսեմք : Մեր ըրած հաւանական հաշուովը, պէտք էր երեսունէն մէկը ուսանող համրէինք, սակայն քառասունէն մէկը աշակերտ է կ'ըսեմք, այս մասին թէ՛ օտարաց և թէ՛ բուն Բուլղարացիները :

1 Տես նոյն երկրին տեսութեան ասենագպիր Պ. Քրիշեին օրացոյցը :

զարցոց համաձայնելու համար , որոնք մեզի պէս բուն երկրին մէջ
տեղեկութիւն ստացեր են , և գուցէ իրենք մենէ աղէկ ստու-
գած ըլլան բանք :

Պօսնացոց ուսումնականութիւնը , մանաւանդ յունագաւան
Պօսնացոց , Քարատաղցոց և Ալպանիացոց (խրված) շատ ետք
է : Ասոնց ուսումնականութեան վիճակը կրնանք Ռուսաց նման
համարել , (այսինքն վեց հարիւրէն աշակերտ մը միայն :) Այս
գծբաղդ վիճակին բուն պատճառը այն է որ , պատերազմասէր
բնաւորութեան տէր այս ժողովուրդները՝ օտարաց հնարքներովը
իրենց Տէրութեան դէմ ապստամբութեան զբաղած՝ իրենց բու-
լոր ուժը կորուսին :

Տայց ուսումնականութեան մէջ այսչափ ետ մնացող այդ քը-
րիստոնէից թիւը մեծ չէ , մանաւանդ երբ դիտելու ըլլանք որ
Տաճկաստանու այլ և այլ ցեղ հպատակները , որոնք սխալմամբ
Յոյն կ'անուանուին , աւելի յառաջադէմ են ուսմանց սկզբունք-
ներուն մէջ քան թէ Սըրֆի բնակիչները անգամ , ուր , ինչպէս
վերը տեսանք , տասներմէկ անձէն մէկը ուսանող է . ուստի , Պօս-
նայի և Հերպէնկովնի ուսումնականութեան նուաստութիւնը մեծ
փոփոխութիւն մը չընէր , վասն զի , ամենը մէկէն առնելով , Աւ-
րուսիոյ Տաճկաստանու բոլոր քրիստոնէից երեսունէն մէկը աշա-
կերտ է : Կարևոր խնդիր մը ըլլալով այս , կարծեմք թէ մեր ըն-
թերցողաց հաճելի է տեսնել հոս այնպիսի ապացոյցներ , որոնց-
մով կրնան բաղդաատել իրենք Տաճկաստանու և Ռուսիոյ ու-
սումնականութեան յարաբերութիւնը :

Ռուսի ուսումնականութեան յառաջադիմութիւնը երկու տե-
րութեանց բուն կեդրոնին մէջ քննեմք , այսինքն Մօսքուայի և
Կոստանդնուպօլսոյ :

Մօսքուայի նահանգին մէջ ինը կառավարութիւն կը համ-
րուի . հասարակաց ուսման տեսուչին 1850 տարւոյն թանուցակե-
րը կը յայտնէ որ , ինչպէս տեսանք արդէն , նոյն նահանգին
ընդհանուր և մասնաւոր դպրոցներուն մէջ , քսան հազար երկու
հարիւր եօթանասուն երկու աշակերտ կայ , մէկ տեղ առնելով
և գծագրութեան դպրոցը որ կիրակի օրերը կը բացուի միայն :

Մօսքուա նահանգը բաղկացընող յիշեալ կառավարութիւններ-

ըր տասը միլիոն ութ հարիւր հազար բնակիչ ունին . որով յայտնի կ'ըլլայ թէ՛ Ռուսիոյ Տէրութեան բուն կեդրոնին մէջ անգամ գրեթէ հինգ հարիւր երեսուն անձէն մէկը միայն ուսանող է :

Մօսքուայի այս ուսումնական նահանգը բոլոր Ռուսիոյ հետինչ համեմատութիւն ունինէ՛ նոյն համեմատութիւնը ունի նաև Կոստանդնուպօլիս Լաբիպիոյ Տաճկաստանին հետ :

Ով որ Կոստանդնուպօլիս եկած ու այս մասին տեղեկութիւն ստացած է նէ կը վկայէ թէ, դպրոց չգացող քրիստոնէից թիւը շատ քիչ է հոն . մինչև անգամ եթէ մակաբերելու ըլլամք որ Կոստանդնուպօլիսոյ բնակչաց ութին մէկը միայն աշակերտ է, գուցէ Տաճկաստանի այս մասին ուսումնականութեանը վրայ զգարատութիւն մը ըրած սեպուինք :

Չեմք գիտեր Տաճկաստանու քրիստոնէից ուսումնական վիճակը Եօրա Բալմէրսդընին աչացը առջեւն էր երբ ներկայ տարւոյս օգոստոսի 16 ին՝ օրէնագրական խորհրդարանին մէջ խօսած ատենաբանութեամբը ըսաւ՝ « Այսչափ քիչ ժամանակի մէջ Տաճկաստանու չափ յառաջագէ՛մ երկիր մը չեղաւ . » Սակայն ուսումնականութեան վերաբերեալ մեր այս գրուածքը, զոր ապացոյցիւք բացայայտեցինք, Եօրա Բալմէրսդընին խօսքը անժըխտելի կերպով կը հաստատէ :

Տաճկաստանու և Ռուսիոյ ներկայ վիճակը աւելի որոշ ցունենելու համար, պէտք է աւելցընեմք՝ որ Ռուսիոյ Կայսրութեան մէջ, բաց ՚ի Ֆէնլանտի երկիրը և հին Լեհաստանը, քառասուն միլիոն բնակչաց մէջէն հարիւր հազարը միայն այն դժբաղդ աղնուականներն են զորոնք յիշեցինք վերը, և որ ճշմարիտն ըսելով երկու արտօնութենէ աւելի բան մը չունին, ինչպէս բուն Ռուսներն անգամ կը խոստովանին : Այն արտօնութիւնները ասոնք են . ծեծել՝ առանց ծեծ ուտելու և գերի գործածել իրենց շահուն համար՝ : Մօսքուայու աղնուականաց թիւը՝ Շինցլէրին շինած վիճակագրութենէն՝ քաղեցինք, որուն համար Ռուսիոյ Արկողայոս Կայսրէն վարձատրեցաւ նոյն անձը :

1 Աղնուականք այս գերիները իրենց հողերը կ'անուանեն, (կամ քրիստոնէացի) :

2 Տպեալ՝ է Բարեղ 1835 :

Կոստանդնուպօլսոյ Կառավարութեան ընթացքը դիտելով՝ քրքրիտանկից ապառնի գեղեցիկ վիճակը ուրախ սրտիւ կրնայ մահաբերել ամեն մարդ : — Տես 'ի Ռուսիա , Այս երկրիս մէջ ազնուականները և ինքնակալը կը դողան միշտ խորհելով միայն՝ որ որ մը իրենց երեսունըվեց միլիոն գերիները ուզեն պիտի վայելել այն աղատութիւնը՝ զոր կը վայելեն Տաճկաստանու հպատակները : Վասնորոյ , երբ մէկ կողմէն ուսումնականութիւնը նեղասահմանի մը մէջ կ'ամփափէր Ռուսիոյ Տէրութիւնը , մէկալ կողմէն նոյն Կայսրութեան Հարաւային մասէն կ'արտաքսէր Օսմանեան Տէրութեան հպատակ ըլող բոլոր քրիստոնեաները , և այն իբր աղատութեան հոգին սխռողք Ռուսաց գերիներուն մէջ :

Ահաւասիկ Տաճկաստանու և Ռուսիոյ այժմեան պատմութիւնը , ամենաճիշտ ազբիւրներէ քաղած , և ազաա՝ ժողովրդոց ըսկիզբին և կամ անոնց կրօնքին վերաբերեալ ամեն խորհուրդներէ :

Անոնց՝ որ կը խորհին թէ Տաճկաստանու քրիստոնեայք աւելի երջանիկ կրնան ըլլալ Ռուսաց Կառավարութեանը տակ քան թէ ընդ իշխանութեամբ Օսմանեանց , և այս՝ այն պատճառաւ միայն որ Ռուսները քրիստոնեայ են , անոնց , կ'ըսեմք , որ ընդարձակ տեղեկութիւն ունին , փոքր Ռուսաց (Խաղախներուն) և Լեհաց պատմութիւնը կը ներկայացընեմք , թէ և յիշեալ երկիրներուն պաշտօնաւորն է Ռուսիոյ Տէրութիւնը , ինչպէս կ'անուանէ զինքը : Նոյն պատմութիւնը յայտնի կը ցուցընէ այն մեծ վասնդը , որուն մէջ կ'իյնայ անշուշտ բարեկրթութիւնը , եթէ կարելի ըլլայ Ռուսիոյ բացարձակ իշխանութիւն մը վարելու Տաճկաստանու մէջ , զորօրինակ ինքը կը փափաքի :

Տնեքեր գլեախն միւս կողմը ըլլող փոքր Ռուսք , առաջին եզան փորձիւ հասկընալու ի՛նչ ըսել է Ռեթրպուրկի Կառավարութեան պաշտպանութիւնը : Նոյն տեղւոյն բնակիչները , Խաղախ անուան տակ , ինչպէս ծանօթ է ամենուն , Լեհաստանու ժողովրդեան մէկ մասն էին : Տանընթերցող դարոյն մէջ հալածուելով ասոնք Լեհաց այն մէկ մասէն որոնց ձեռքն էր ան ստեն Լեհաստանու Կառավարութիւնը , Սուլթանին իշխանութեանը տակ մանկուքանի մը անօգուտ փորձեր ըրին . և յետոյ , տասներութերորդ

դարոյն սկիզբները, Շուէաի մէջ յոյսերնին փճանալով և յեհաստանը այլևայլ կտոր բաժնուելով, սկըսան Չարաց իշխանութիւնը կրել: Բաւական է ըսել, որ Բիւիվ խաղախներուն գլխաւոր քաղաքն էր. ասով ամեն մարդ շուտով կը յիշէ թէ Մօսկովները այս ժողովրդէն առին կրթութիւնը: Դեռ տասներութերորդ դարոյն սկիզբները, փոքր Ռուսաց պղտի քաղաքներուն մէջ անգամ տպարաններ կար, ինչպէս Նովկորօսի և Սիւվերսքի մէջ: Սակայն Բիթրպուրկի կառավարութիւնը՝ ուսու մնականութեան կողմէն Մօսկովաց աստիճանին հաւասարեց և այս ժողովուրդը: Միշեւէ անուն կրեւելի փիլիսոփայ—պատմիչը, կարճ խօսքով, Մօսկովաց իշխանութեանը սակ գանուող փոքր Ռուսաց համառօտ պատմութիւնը ըրաւ. « Բանաստեղծական հոգւոյ աէր այս ժողովուրդը, Ռուսիոյ Սառուցեալ ձեռացը մէջ իյնալով պապանձեցաւ, կ'ըսէ ո՛ր »:

Սովորաբար կ'ըսուի թէ, Ռուսք ինչո՞ւ պաշտօնաւորներ առած ժողովուրդները կը Ռուսացունեն, և ասով անձ մը ուրիշ անձի մը կերպարանափոխելու ստակալի գործողութիւնը վերող ձեռքերու սակ պաշտօնաւորներ քաշած սաստիկ տառապանքը դիւրաւ կը մտկաբերէ ամեն մարդ: Յիրաւի այնպիսի կերպարանափոխութիւն մը կայ որ խիստ շահաւոր է կերպարանափոխեալ ժողովրդոց համար, և մեծ ուրախութիւն մը իրենց: Միթէ Գերմանիոյ Ալլաասու ժողովուրդը ցնծութեամբ Բաղդիացի շեղա՞ւ: Ասոր պատճառը այն էր որ՝ Ալլաացիք իրենց ազգութեան մէկ մասը զոհեցին աւելի մեծ ու անուական բարիք մը վայելելու համար: Իսկ ընդ հակառակն Ռուսներէ պաշտօնաւորները ոչ երբէք Ռուս կ'ըլլան, այլ ադէտ ու բարբարոս. վասնորոյ ամեն կիրթ ժողովուրդք, թէ՛ Արեւելեան թէ՛ Աւրօպացի, սրամըտութեամբ պէտք է բոլբոլին այսպիսի գործէի մը դէմ:

Փոքր Ռուսաց վայ Բիթրպուրկի կառավարութեան ըրած գործողութիւնները ցուցուցինք. այն գործողութիւնները, կ'ըսեմք, որ այս ժողովուրդը վերջապէս ազխաութեան, գերութեան ու բարբարոսութեան մէջ ձգեցին: Բայց այդ գործողութիւնները աւելի յայտնի կ'երևին յեհաստանու այն մասերուն վրայ, որոնց մէջ

1 Միշեւ Բօսսիուզեքօ. ԺԴ:

կը Ռուսիոյ ինն գործերը կ'ըսուի և մէկտեղ Վեննայոս ժողովոյն իննաստանը ։
Վասն զի Տէթրպուրկի կառավարութեան ասոնց վրայ ըրած
գործքերը մեր օրերը պատահեցան ։

Աւելի տխուր բան չի կրնար ըլլալ այն մարդուն համար որ ,
գրիչը ձեռքը , Ռուսիոյ հասարակաց ուսման տեսուչին օրագիւ-
րը կ'ըսուի ։ Հոն կը տեսնեմք որ Վլենայի Համալսարանին մէջ
միայն , 1831ին , գրեթէ հազար երկու հարիւր ուսանող կար ։
Վոյճնիայի մէջ ըլլող Բրչեմիենեցի ձեմարանը (լիսէ) խիստ
հաշակաւոր էր այն ատենները ։ Այլեւ թեմական եկեղեցի նախնա-
կան դպրոց (էքզըբրիմէր) մը ունէր ։ Իսկ այսօր , Ռուսիոյ
կայսրութեան իննաստանին բոլոր գաւառաց դպրոցներուն մէջ
ընդ աշակերտաց թիւը՝ Մոսկովի ժողովրդոց հաշուին հետ ար-
դէն հաճախայն կուգայ ։ Այս տխուր իրաց աղէկ մը խելահաս ըլ-
լալու համար , պէտք է գիտնալ որ , ընդհակառակն , Վեննայոս ժո-
ղովոյն իննաստանը ըսուող երկրին մէջ վաթսուն բնակչէն մէկը
աշակերտ է այժմ՝ ։

Այսպէս , Վիլնայի , Կրօանօյի , Բօմբօյի և Վոյճնիայի կա-
ռավարութեանց մէջ² , վեց հարիւր բնակչէն մէկը ուսանող է ։
Իսկ ասոնց արեւմտեան կողմի սահմանակից Վարսաւիայի և Դուպ-
լինի կառավարութեանց մէջ³ , վաթսուն բնակչէն մէկը աշա-
կերտ է ։ Իննաստանու ժողովրդոց դաստիարակութեանը վերաբեր-
եալ այս մեծ տարբերութիւնը ուսկից արդեօք յառաջ կու-
գայ ։ Ռուսիոյ կայսրութեան իննաստանը ըսուող գաւառաց
կառավարութիւնները , զորոնք վերը յիշեցինք , Վեննայոս ժողո-
վոյն իննաստանը ըսուող մասէն անցեալ դարուն վերջերը բաժ-
նուեցան ։ Անշուշտ , այս սահմանակից երկիրներուն մէջի ու-
սումնականութեան աստիճանը միեւնոյն էր ։ Ուսկից է ուրեմն
այս օրուան այն ահագին տարբերութիւնը ։

Ահաւասիկ այս այլանդակ երևոյթին մեկնութիւնը ։

Վիլնայի , Կրօանօյի , Բօմբօյի , և Բօստովի կառավարութիւն-
ները գրեթէ վաթսուն տարիէ՝ ի վեր ուղղակի Տէթրպուրկի

1 Ըստ 1850 տարւոյն օրագրին , զոր յիշեցինք ։
2 Ռուսիոյ կայսրութեան իննաստանը ըսուող մասը ։
3 Վեննայի ժողովոյն իննաստանը ըսուող մասը ։

Կառավարութեանը տակ են, իսկ Վեննայու ժողովոյն Լեհաստանը ըստող երկիրը, 1830 և 1831ին ըլող պատերազմերով անցաւ ուղղակի Ռուսիոյ Տէրութեանը տակ :

Այսօր, և շատ տարիներէ 'ի վեր, հին Լիթուանիայի (հին Լեհաստանի) բոլոր երկիրներուն մէջ՝ այնպէս ճեմարան մը չի կայ որ կարենայ նմանի Տաճկաստանու Պէլկրատի, Պուքրէշթի և Լաշի վարժարաններուն : Վեննայու ժողովոյն Լեհաստանն ալ Տիթրպուրկին ուղղակի կառավարութեանը տակ մնայնէ միշտ, այն ժամանակը, այս երկրին դատախարակութիւնն ալ շուտով Մ'օսկովի ժողովրդոց ուսումնականութեանը կը համեմատի : Արդէն Մ'օսկովի մէջ ճեմարան մը չի կայ :

Փոքր Ռուսիոյ և Լեհաստանու կրթութեան շիրիմներուն տեսարանը արդարեւ ողբալի է. սակայն, հարիւր անգամ աւելի տըխուր է այս երկիրներուն վիճակը, երբ խորհիւք՝ որ Խաղախներուն և Լեհաց դատախարակութեանը արդելք ըլողը չէ թէ կայսեր կամ իւր կառավարութեանը չար կամքն է, այլ բուն Մ'օսկովաց վիճակը պահպանելու հարկը կ'ստիպէ զիրենք յիշեալ ժողովրդոց ամեն ուսումնականութիւնը արդիւլելու : Ասոր ճշմարիտ պատճառը յայտնի է Մ'օսկովաց պատմութենէն, որոնք, ուսումնականութեան և ընդհանրապէս կրթութեան մասին Խաղախներէն, Լեհերէն, Սլաւներէն և Եւրոպիոյ քանի մը դարուան ամեն ժողովուրդներէն շատ ետք ըլլալով, Ռուսիոյ ինքնակալք և իրենց կառավարութիւնները ստիպուած են յիշեալ նուաճեալ ժողովրդոց յառաջադիմութիւնը արդիւլելու, որպէս զի Մ'օսկովաց, այսինքն մեծ Ռուսաց, ներկայ աստիճանին հաւասարին և այն ժողովուրդները :

Մ'օսկովի պատմութիւնը կը հաստատէ այս տեսարանը :

Սակայն, հաճութեամբ կը յիշենք նախ, որ Եւրոպիոյ լրագիրք, ներկայ գրուածքիս Հեղինակին համեմատ, սկըսան տեսնել և իրենք թէ՛ Ռուսիոյ դէմ Տաճկաստանը պաշտպանելով՝ չէ թէ միայն վաճառականութեան շահը և Եւրոպիոյ քաղաքական հաւասարակշռութիւնը կը պաշտպանեն, այլ նաև բարեկրթութիւնը կը պաշտպանեն բարբարոսութեան դէմ : Այսպէս, Տէյլի

1 Աիլնա, 1830ին, հաղարեկուհարիւր աշակերտ ունէր իւր Համալսարանին մէջ :

Նիւով անունն Անգղիոյ լրագրին խմբագիրները շատ որոշ կերպիւ
 մը խօսելով այս նիւթիս վրայ կ'ըսեն . « (Օսմանեան անկախու
 թիւնը և ամբողջութիւնը պահպանել պարտաւորութիւն մըն է
 Պաղղիոյ և Անգղիոյ , և այն՝ խիստ հարկաւոր է Բալկաններ
 համար , որ բարբարոսութեան արշաւանաց ապառնա
 լեօքը վտանգի մէջ ինկած է . Եւրոպական կրթութիւնը , որուն
 գլուխը կեցած են Պաղղիան և Անգղիան , վտանգեալ է Ռու
 սիայէն . » Օայս հաստատելէն վերջը գանջ մեր խնդրոյն .

Մօսկովի բնակիչները՝ ուսումնականութեան մասին Տաճկաս
 տանու քրիստոնեաներէն ինչ տարբերութիւն ունին , նոյն տար
 բերութիւնը ունին նաև աղատութեան մասին .

Յիշաւի Ռուսիոյ հարիւր հազար ազնուականք իրենց սեփ
 հական արտօնութիւն մը ունին զօրաց պաշտօնակալ (օֆիսիէ) ըլլալու
 արտօնութիւն մը՝ ուսկից զրկուած են գրեթէ քառասուն միլիոն
 քաղաքացիք ու գերիք՝ . Այս արտօնութիւնը կ'ըստատուի նաև
 Տաճկաստանու քրիստոնէից համար . Արդարև (Օսմանեան տէ
 րութեան ընթացքը դիտելով՝ այս պակասը շատոնց լուսն ունենա
 լու էր . սակայն Տէթրպուրկիկյառավարութեան խորամանկ հնարք
 ներք՝ որ հարիւր տարիէ աւելի է Սուլթանին մահմետական ու
 քրիստոնեաց հպատակացը մէջ շարունակ հակառակութիւն ցանկե
 լու կ'աշխատի , պարտաւորեցին զբարձրագոյն Դուռը երկարե
 լու դեռ քիչ մը ժամանակ այս արտօնութեան գործադրութիւ
 նը . Բայց զինուորական վիճակէն առաջ եկող պատիւը չունին
 նէ քրիստոնեացք , նոյնպէս և անոր ոչ նեղութիւնը ունին և ոչ
 վտանգը . Իսկ զըրազխութեան արտօնութեանը պատճառաւ Մօս
 կովի ազնուականաց հաճութիւնը (ինչպէս նաև այն հաճութիւ
 նը որ ունին ծեծելու առանց ծեծ ուտելու , և գերինին՝ այսինքն
 իրենց հոգիքը՝ ծախելու , առանց իրենք ծախուելու) նոյն հա
 ճութիւնը , կ'ըսեմք , ա՛լ չկրնան խաբել զոք , որովհետև գիտէ աշ
 խարհ որ Մօսկովի ազնուականք , առանց զարտուղելու ասոնց

1 Քաղաքացիք ու գերիք զօրապէս չեն կրնար ըլլալ . ըստ հիմնական օրինաց Ռուսիոյ .
 այս մասին եղած զարտուղութիւնները չէ թէ կ'եղան նոյն օրերը , այլ անոր խստութիւնը
 աւելի կը հաստատեն : Ճշմարիտն այն է որ , քաղաքացւոյ կամ դիւղականի մը ծնունդ ըլ
 լող զօրականը գիտէ որ զօրազխութեան աստիճանը ազնուականաց միայն վերադասեալ է :

զօրապետները , ոչ շօթելու և ոչ իրենց որդիքը դասափարակելու իրաւունքը ունին հիմա , Մօսկովի ազնուականք ու ասոնց զօրապետները ուղած անգերնին ճամբորդութիւն ընելու համար , և ըստ իրենց կամացը որդիքնին դասափարակելու համար , մէկ խօսքով , Մօսկովի ազնուականները ազատութեան մասին Մուլթանին հպատակ քրիստոնեաներուն հաւասարելու համար , գուցէ արիւնոտ հեղ խոտովութիւններ հանելու են Ռուսիոյ մէջ : Բնորհակաւ ուակն՝ Տաճկաստանու բոլոր քրիստոնեայք Մօսկովի հարիւր հազար ազնուականաց արտօնութիւնը վայելելու համար , այսինքն , ինչպէս դէսպան ըլլալու իրաւունքը ունին , նոյնպէս և զօրապետութեան աստիճանը ստանալու համար , ուրիշ բան պէտք չէ՝ բայց կ'թէ բանի մը տարուան խաղաղութիւն :

Դարձեալ պէտք է յիշել թէ՛ զօրապետութեան աստիճանը , որ խիստ նշանաւոր է Ռուսիոյ մէջ , վասն զի ազնուականութեան նշան է , այսինքն խարութիւն օրինաց առջև , այն աստիճանը , կ'ըսեմք , նոյն զօրութիւնը չունենար Տաճկաստանու քրիստոնեից համար , ուր ամենքը հաւասար են օրինաց առջև , և այս երկրիս մէջ խարութիւն ընող բանի մը օրէնքն ալ դիւրութեամբ կը ջնջուին՝ :

Ռուսիոյ քաղաքացի քրիստոնեաները ազատութեան մասին Տաճկաստանու քրիստոնեից հաւասարելու համար , ո՛ր գիտէ որչա՛փ արիւն պիտի հոսի : Մօսկովի ազնուականները և իրենց ինքնակայք , կրկին անգամ կը զբուցեմք , կը դողան միշտ խորհելով միւս այն որ՝ օր մը իրենց գերիները ազատութիւն պիտի ուզեն , ինչպէս աղաւ են Տաճկաստանու քրիստոնեայք :

Ռուսիոյ հիմակուան բոլոր գէշութեանց պատճառը Դարարներուն այս երկրիս վրայ ըրած տիրապետութեանը կուտան : « Դարարները , կ'ըսեն , տաւիրէք , տանըչորս և տանըհինգ

1 Իտիրնէի մէջ մօտերս պատահած յետադայ դէպքը , խիստ սրոշ կերպով կը ցուցունէ թէ կրնաց բարեկարգուի և այն օրէնքը՝ որ Տաճկաց դէմ երաշխաւորութիւն ընելը կ'արգիլէ քրիստոնեից : Յիշեալ քաղքին մէջ երկու քրիստոնեայ խեղճ հովիւք զօրաւոր Աէյ մը ամբաստանեցին . վասն զի նոյն Աէյը ուզեր էր աղջիկ մը կին աւնուլ , սակայն աղջիկը Աէյին տեղը հովիւ մը իրեն էրիկ ընտրելուն համար . Աէյը՝ իւր սպասաւորաց մեկուն հրաման ըրեր էր սպաննելու այն հովիւը . Ուստի դաւառին Ատուավարութիւնը աւանց վարկեան մը յապաղելու , երկու քրիստոնեայ հովիւներուն վկայութեամբ բանտարդեց այն զօրաւոր Աէյը որ Աէյիբէ մը որդի էր : (օրագ. Աոսա . 14 հոկտեմբեր) :

դարերուն մէջ Մօսկովի բարեկրթութիւնը ջնջեցին և ինքիշխան Միապետութիւնը հաստատեցին հոն . և վերջապէս , Միապետական ինքնիշխան կառավարութիւնն է , կ'ըսեն , որ նոյն երկրին ուսումնականութիւնն ալ ազատութիւնն ալ կը խախտէ , նոյնպէս և փոքր Ռուսիոյ և Ղիզաստանու . և հարկու Տաճկաստանու քրիստոնէից ազատութիւնն ալ կը ջնջէր , եթէ կարենար իւր կառավարութեանը տակ ձգել և զանոնք :

Ռուսիոյ իշխանութեանը տակ իյնող օտար ժողովրդոց այս մասին կրած վնասները ճշմարիտ են , բայց անոնց պատճառը Միապետական ինքնիշխանութեան կամ Դադարաց տալ շատ սխալ է : Ասոնք արտաքին երկոյթներեն , որոնց տակ քաղաքականութիւնը ծածկել կ'ուզէ զճշմարտութիւնը , բայց պէտք է որ բոլոր Աւերուպա ազգէկ ճանչնայ զասոնք :

Կախ՝ ինքնիշխան կառավարութեան մասին կ'ըսեմք որ ,

Հին ու նոր պատմութիւնը կը ցուցնէ թէ , Միապետական ինքնիշխան կառավարութիւնը ուսումնականութեան արդեւք չէ : Այս մասին Տաճկաստանը Ռուսիոյ քով անժխտելի ապացոյց մըն է : Տաճկաստանու մէջ՝ ինքնիշխան կառավարութեան տակ , երեսուն բնակչէն մէկը ուսանող է , և նոյն Տէրութեան կրթութեանց կեդրոնին մէջ՝ Մուլթանին Մայրաքաղաքին մէջ , ութին մէկը աշակերտ է : Իսկ Ռուսիոյ ինքնիշխան կառավարութեանը տակ , վեց հարիւրէն աւելի անձանց մէկը միայն ուսանող է , և նոյն Տէրութեան կրթութեանց կեդրոնին մէջ՝ Մօսքուայի նահանգին մէջ , հինգ հարիւր երեսունին մէկը աշակերտ է :

Մուլթաններուն ինքնիշխան կառավարութիւնը ոչ երբեք օրէնք դրաւ քրիստոնէից դաստիարակութեանը դէմ , զորօրինակ ըրեր են և կ'ընեն դեռ Ռուսիոյ Չարք : Այնպիսի գործք մըն է այս զոր պարտիմք հաստատել իսկոյն :

Շափարձիք անուն Ալաններուն հնա-բնանոց հեղինակը , հիմնական խիստ համբաւաւոր գիանոց մէկը , թշնամի Տաճկաց և Տաճկաստանու , Ալաններուն որդերովէնը ընդ իշխանութեամբ () ասանեանց ըսուած երեւելի գրուածքին մէջ , նոյն քրիստոնէաց ժողովրդոց կրթութեանցը յառաջադիմութեանը վրայ մանրամասն քննութիւն ըրաւ : Այս անձը արտաքոյ կարգի նախապաշարմունքով մը սկը-

Բաւ իւր գրուածքը Օսմանեանց դէմ, նման գրեթէ այն ամեն անձանց՝ որ Տաճկաց վերաբերեալ խնդիրներու վրայ անդեկու թիւն առնելու կ'սկըսին : Այնպէս և յիշեալ հեղինակին համար մարդակեր ժողովուրդ մը էին Օսմանեանք, մանաւանդ տասներչորս, տասներհինգ և տասներկու դարերուն մէջ : Բայց գիտութիւնը, դէպքերը և հեղինակին խիղճը վերջապէս յաղթելով նախապաշարմանց, հարկադրեցաւ այն խոստովանելու թէ, Օսմանեանք՝ Յունաց մէկ մասէն Լաբուպա կանչուած ըլլալով՝ գտան հոն Բուլղարաց, Սրբֆերուն և Պօսնացոց երկիրները, որոնց ազնուական նութեանը չէին կրցեր մնասել դեռ կոստանդնուպոլսոյ ամեն անկարգութիւնները, և թէ Օսմանեանք այս երկիրներուս տիրելով այն ազնուականութիւնը ջրջլէն վերջը, իրենց հպատակ ըլլող քրիստոնէից ներքին կենացը վերաբերեալ ամեն բան ազատ թողուցին : Իրենց հպատակ քրիստոնէաներուն հետ իւրաքանչիւն, հաճախ և անպարտաւոր, և ընդհակառակն խիստ ահարկու իրենց թշնամեացը հետ, և թէ այն անդերուն բուն ժողովուրդը այսպիսի կոտորածներէն մը առկա՝ ազնուականներուն նման խանդարեալ չէր, ուստի և նոյն երկիրներուն կրթութեան յառաջադիմութիւնը չէր դադրած, մանաւանդ թէ ասոր անխափան գործադրութեանը կը հսկէին միշտ Օսմանեանք : Այսպէս է չորեք տասանը քաղաքի դարէն սկըսեալ մինչև ցտանբուլթը դարուն պատահարաց վիճակը : Այս վերջին դարուս մէջ, կ'ըսէ Հաֆարձիք, Օսմանեանք սկըսան փոխուիլ, ուստի և իրենց հպատակ քրիստոնէից յառաջադիմութիւնն ալ դադրեցաւ :

Հաֆարձիքին Տաճկաց համար ըսածը, անշուշտ, ասոնց Միսպեաական, ինքնիշխան կոտորածներէն համար է :

Այս գիտուն անձը կ'ըսէ թէ, Տաճկաստանու քրիստոնէից յառաջադիմութիւնը տասներեօթերորդ դարուն մէջ խափանուեցաւ : Բայց մենք կը տեսնենք որ Խաղախները, փոքր Ռուսք, յիշեալ դարուն մէջ Սուլթանաց հպատակ ըլլալ կ'ուզէին, ինչպէս եղաւ ասոնց մէկ մասը, և Տօրօշէնքօ անուն իրենց իշխանը, Վասն զի Խաղախները՝ բարբարոսութեան ու գերութեան երկիր մը համարեր էին միշտ զՍոսկուլի երկիրը՝ :

1 Տես Խաղախներուն պատմութիւնը Բօնիսքի Յոյն եպիսկոպոսէ գրեալ, էրես 118 :



Տաճկաստանու յառաջագիծութիւնը՝ տասներութերորդ դարոյն մէջ դադարեցաւ, և ասոր բուն պատճառը՝ օտար կառավարութեանց՝ և մանաւանդ Ռուսիոյ կառավարութեան Տաճկի Տէրութեանը ներքին գործքերուն միջամուխ ըլլալն էր. ուսկից առաջ եկաւ այն հակառակութիւնը որ նոյն կառավարութիւնը ցանկեց ու հաստատեց Սուլթանին մահմետական ու քրիստոնեայ հպատակացը մէջ, ՚ի վնաս յիշեալ երկու ժողովրդոց: Այսու ամենայնիւ, նոյն տասներութերորդ դարոյն մէջ Հէդման Սասէփաշին՝ ձախորդ պատահարէն վերջը և Եհաստանին անկմանը ատեն, Տնեքերի կողմերը դանուող խաղախները Սուկուլէն զատուելով Սուլթանաց հնազանդիլ կը խորհէին՝:

Փոքր Ռուսիոյ խաղախները Եհաց արնուականներէն էին և են դեռ. բայց Յունադաւան ըլլալով, Քաթոլիկ Եհերուն, իրենց եղբարցը դէմ ատելութիւն ունէին, որովհետև Հռովմէական Եհերը թող չէին իտար ասոնց Օտրակոյտի անդամ ըլլալ:

Ուրեմն, Տաճկաստանի մէջ ինքնիշխան Միապետութիւնը կը թուութեան թշնամին չէր. ուստի և Սուկուլէ ինքնիշխան Միապետութիւնը չի կրնար բամբասուիլ իբր ուսումնականութեան և ազատութեան դիտար թշնամին իր երկրին մէջ:

Սուկուլէերուն, մեծ Ռուսաց, այս օրուան դժբաղդ վիճակը ընդհանրապէս աւելի դադարներուն տիրապետութեանը կուտան. Իչնիս՝ Ռուսիոյ քիմիոսիոսիան ու քաղաքական վիճակը քաղելով բուն իրենց պատմութենէն, այսպէս կըսէ. « կը պարծենան թէ Ռուսիան պիտի ազատէ զՅունաստանը՝. Ռուսիան բան մը չառ զատեր, այլ ամեն բան կը կապէ, և վա՛յ անոնց զորոնք կը պաշտոն պանէ. . . . Ռուսաց պատմութիւնը, անշուշտ, և գուցէ քիչ ատենեն, աշխարհիս տիրապետաց պատմութիւնը պիտի ըլլայ, թէ որ Լաբոպիոյ պարզամտութիւնը (պօնօմի) թողու զիրենք Միջերկրական ծովուն վրայ հաստատուելու, կամ, որ նոյն բանն է, Տարտանելի ազատ նեղուցին տիրելու. այն ատեն,

1 Այս անձը խորամանկութեամբ մը Ռուսիոյ հպատակ ըրաւ զՍաղախները որոնք Տաճկի Տէրութեան հպատակիլ կ'ուզէին:
 2 Տես Լեզիբի պատմութիւնը 1814 հատ. Բ. եր. 230:
 3 Յունաց ազատութեան վեճին ժամանակը դրած է գտածք հեղինակը:

« Անգղիոյ ծովային եռաժանին¹ ասոնք պիտի յափշտակեն, և
 »² Գանահարութեանց պատիժը³ և կարծես թէ
 նաև այս հեղինակը հակեալ է այն կարծիքին որ Գաղարներ
 բուն կը սեփհականէ Ռուսաց⁴ այս օրուան վիճակին պատճա
 րը • իբր թէ Գաղարները յատուկ ժողովուրդ մը ձեւացուցին
 զՄօսկովները՝ Ներուպան տակն ու վրայ բերելու, և, ինչպէս կ'ըսէ
 նոյն հեղինակը, անբան ընելու, քանի մը դժբաղդ պատահարաց
 մէջ • Սակայն Գաղարաց վրայ կը սխալի այս հեղինակը • Ինչ՞որ
 պուրկի կառավարութեան և բոլոր Մօսկով ազգին ներկայ քաղա
 քականութեանը անունդ տուող աւելի մեծ պատճառ մը կայ՝ զոր
 պարտ է ճանչնալ • Իսկ ինքնիշխան Միապետութիւնը և Գա
 ղարները այս մասին ուրիշ բան չեն բաց եթէ ճշմարտութիւնը
 ծածկելու դիմակներ •

Մեծ Ռուսաց իշխող այս Գաղարները՝ նոյնպէս և փոքր Ռու
 սաց տէրն էին • և սակայն, պատերազմնը կամ Վարական ըսուած
 Ռուսներուն և Տիւրք իշխաններուն հարտակ ըլլող ժողովու
 ղոց պատմութեանը երեւելի մասերուն տեղեակ անձինք գիտն
 որ՝ փոքր Ռուսիան դարոց մը եղաւ միշտ մեծ Ռուսիոյ, թէ՛
 Գաղարաց տիրապետութեանը ժամանակ և թէ՛ առսջ, ու այս
 պէս շարունակեց մինչև տասնըութ դարուն կէսերը, այսինքն
 մինչև այն ժամանակը, ուր ուսանողք ինչո՞ւ չարտօնեցին «դան
 նէն» • Կոյնպէս և Ռուսիոյ կայսրութեան գաւառները ըսուող
 ինչաստանը Գաղարաց իշխանութեանը տակ էր •

Այս դէպքերս յիշելը բաւական է համոզելու թէ՛ Մօսկո
 վաց ներկայ վիճակին խեղճութիւնը չէ թէ՛ Գաղարաց՝ այլ ուրիշ
 աւելի մեծ պատճառի մը մէջ փնտրուելու է • Ինչո՞ւ անկեղծ պարմա
 ինչը, որ եղածը ինչորո՞ք է չէ թէ այն որ դէտ էր ըսու, դեռ ուրիշ ա
 պացոյցներ կը ներկայացընէ մեզ, այս մասին •

Բրիտաննէական հաւատոյ և կամ բարեկրթութեան վերա
 բերեալ մասանց վրայ Գաղար խաներուն ցուցուցած քղատակա
 նութեան հոգին մեծ զարմանքի մէջ ձգեց Ռուսաց իմաստուն

1 Այսինքն իշխանութիւնը •
 2 Գանահարութեանց պատիժը •
 3 Պատմ • տիպ Բարիզու, 1829 • հատ • Ա • յառաջար • երես 1 •
 4 Ըստ հեղինակին մեծ Ռուսաց, որք են Մօսկովները •

ներքը . Ուսպէք խանին Երկբը կամ հրովարտակը այսպէս կ'ըսէ՝
 « Ոչ որ նախատէ արքեպիսկոպոսական եկեղեցին (Ռուսիոյ
 » մէջ) և կամ անոր սպասաւորները և եկեղեցականները . եկե-
 » ղեցւոյն վերաբերեալ գործոց մէջ ոչ որ խառնուի , վասն
 » զի Աստուածային բաներ են անոնք Ով որ յանցանք մըը
 » նէ մեր այս հրովարտակին դէմ , Աստուծոյ դէմ յանցաւոր
 » սեպուի , իւր բարկութեանը հանդիպի , ե- ճնէ ալ ՚ի մահ դատա-
 » արարուի » 2 :

Անոնք՝ որ միջին գարուան բոլոր Եւրոպիոյ , և մանաւանդ
 Ռուսիոյ գղերին վայելած արտօնութիւնները գիտեն , յիշելով
 թէ Դադարները մէկ կողմէն Ռուսիոյ գղերին այսպիսի արտօնու-
 թիւններ կուսային , և մէկալ կողմէն Տիւրքի իշխանները ազատ
 կը թողէին իրենց իշխանութեանը երկիրներուն մէջ , բոլոր զա-
 սոնք յիշելով կ'ըսենք , չէ թէ միայն պիտի զարմանան Ռուսաց ի-
 մաստուններուն հետ մէկ տեղ խաներուն ազատականութեանը
 վրայ , այլ և պիտի ըսեն , Դադարները իրենց պաշտպանութեա-
 նը տակ առին քրիստոնեայ հպատակներուն կրթութիւնը . և ա-
 սոր ծաղկելուն համար ամեն պատէհ առիթը ՚ի գործ դրին . Դա-
 նէ այսպէս պիտի էր ըլլար Դադարաց վճիռներուն վախճանը :
 Այս հրովարտակները բուճ խօսքեր չէին , ինչպէս կը վկայեն քր-
 իստոնէից եպիսկոպոսական այն նոր Աթոռները՝ որոնք Դադար-
 ներուն իշխանութեանը ժամանակ հաստատուեցան Մօսկովի մէջ ,
 և այն Աթոռը՝ որ Դադարաց բուն Մայրաքաղաքին մէջ հաստատ-
 ուեցաւ ՚ի Սարայ :

Վերջապէս անոնք՝ որ քանի մը գիւրք ցուցընելով՝ Ռուսիոյ
 տասնըութերորդ դարոյն բարեկրթութիւնը յառաջ կը բերեն ,
 չեն յիշեր որ մեր տասնըիններորդ դարուն մէջ , Մօսկովիները մա-
 նաւոր արարան մը չունին եւ ալ կրնան նոյն իրաւունքը ունենալ . աշխատանքն ան-
 դամ զարի են այն իրաւունքն 3 : Դարձեալ չեն յիշեր որ մեր տասնըինե-
 ներորդ դարոյն մէջ , Մօսկովիները՝ ճշ Ռուսիոյ արարածութեանը բոլոր գի-

1 Այս ատեններս արդէն Մահմետական եղած էին Դադարք :

2 Տես Քարաճղէն պատմ . հատ . Գ . ժամանակ Եարսուլայիչ Մեքայէլ Բ . և ասոր վե-
 րաբերեալ տեղեկութիւնք :

3 Ռուսիոյ ազգային գաստիարակութեան օրագիրը , 1849 , գիրք վեար . ամսոյն . եր .
 168-169 :

դիւրան ժեզ Գորոյ հը շուին¹ . 1814 տարիէն սկսեալ մինչեւ 1828 տա-
 րին , ազգային ուսման տեսուչը կը ծանուցանէր իւր առանձին և
 հրապարակական ատենաբանութեանցը մէջ թէ՛ ընդհանուր ժողովո-
 րեան եւ իմ սուր ձեզ ձե՞ յասին իւրեւ , բիւ արեւելեւը սեւ ըստիւր է
 քան ին թգրակոր² .

Նիկողայոս կայսեր կառավարութիւնը՝ ընդհանրապէս թէ՛
 զգաստարակութիւնը և թէ՛ զկրթութիւնը ինչպէս կը կործա-
 նէ , տեսանք : Տասնրիսներորդ դարոյս մէջ կատարուող այս գործ-
 քերը տեսնելով՝ ո՞վ կրնայ հաւատալ թէ Մօսկովաց բարբարո-
 սութեան ներկայ վիճակը (Մօսկովի Տէրութիւնը և ժողովուրդը
 չեմք զատեր իրարմէ) , ո՞վ կրնայ հաւատալ որ այն վիճակը Դա-
 դարաց տիրապետութեանը գործն ըլլայ՝ տասու իրեք , տասնըչորս
 ու տասնըհինգ դարերուն մէջ : Այսպիսի մեկնութեան մը հա-
 լատալ , ներեն մեր բացատրութեանը՝ ճշմարտութիւնը ամեն բա-
 նէ առաջ , այսպիսի մեկնութեան հաւատալ է , կ'ըսեմք , յիմարու-
 թիւն է . վասն զի տասնըհինգերորդ դարէն վերջը անկախ էին
 Մօսկովիները , և տասնըեօթը դարոյն սկիզբները՝ նոյն ազգին գը-
 ղերը և ազնուականները ու քաղաքացիք՝ ըստ իրենց հաճոյիցը
 կ'ընտրէին զՌուսիոյ ինքնակալները :

Մօսկովաց բարբարոս վիճակին այն իրաւացի պատճառը՝ ուր
 իրենց ներկայն և ապագայն կը տեսնուի , նոյն պատճառը՝ այս
 ժողովրդեան՝ Դադարներուն իշխանութենէն առաջ ըլլող պատ-
 մութեանը մէջ կ'երևայ . դժբաղդաբար պատմութեան բուն այս
 մասը ծածկեալ է , ինչպէս յայտնի կը ցուցնեն Մօսկովաց հի-
 մակուան վիճակը նկարագրող պատմագրաց շնչին մեկնութիւն-
 ները : Այս պատմութիւնը ծածկող պատճառները գիտնալ շատ
 հարկաւոր է անոնց որ՝ Ռուսիոյ և Տաճկաստանու (որ ըսել է
 Ռուսիոյ և Լըրոպիոյ) մէջ ծագող ներկայ վիճերուն կ'ըզբա-
 ղին : Այն պատճառները Տէրութեան կառավարութեան բըռ-
 նութենէն առաջ կուգան , որպէս զի ճշմարտութիւնը անյայտ
 մնալով յիշեալ Տէրութեան աշխարհակալութիւնը գիւրանայ :
 Պէտք է գիտնալ որ , Ռուսիոյ կառավարութիւնը իւր աշխար-

1 Նոյն օրագիր . 1819 , նոյն ամսոյն , եր . 154 :
 2 Նոյն օրագիր , ասենաքանութիւն Էինչ քօթի Նախարարին ծովապետութեան եր . 168 :

Հակադուծեան նպատակին հասնելու համար, տասներու թերորդ դարէն ՚ի վեր սկըսաւ անդժուծեամբ հալածել այն գիտուն անձիւքը՝ որ Դադարաց տիրապետութենէն առաջ ըլլող ժամանակաց պատմութեանը մէջ ճշմարտութիւնը կը խոստովանէին. այս հալածանքը մինչեւ մեր օրերը տեւեց.

Միւլէր՝ Լոզիսաբէթ Բեդրովնա կայսրուհւոյն ատեն Ռուսիոյ Տէրութեան պաշտօնական պատմագիրը, այս մասին Բէթրուպուրկի կառավարութեան քաղաքականութեանը առաջին զոհը եղաւ. վասն զի նախ ինքը սկըսաւ ցուցընել (Թէպէտեւ գիտութեան մասին խօսելով միայն) թէ Մօսկովները, մեծ Ռուսք, իրաւունք չունին Սլաւեան սերունդ կամ ցեղ անուանելու զերենք. վասն զի Սլաւ չեն, այլ Ֆինեան կամ Չուտ են թէ՛ սերընդով թէ՛ ցեղիւ, ինչպէս կը ցուցընէ՝ ամեն ազգին սկիզբը յայանող՝ և իրենց սոյորական վարուցը պատմութիւնը. և թէ Մօսկովները լեզուով միայն Սլաւ են, և այն լեզուն անգամ Ֆինեան կերպարանք մը առաւ. և թէ տաս իրեք դարոյն մօտ վերոյիշեալ պատերազմող կամ Վարակ Ռուսաց և Տիւրիք իշխաններուն հպատակ ըլլող ժողովուրդք (նախ պղտի մասամբ) Նովկորոտի, Տընեբերի և Տնեսդերի կողմանց Սլաւներուն հետ միանալով անոնց լեզուն խօսիլ սկըսան. և թէ նոյն Սլաւները՝ քրիստոնէական կրօնքը տարածեցին ասոնց մէջ Սլաւի եկեղեցական լեզուովը՝, վասն որոյ Մօսկովները՝ գրեթէ Մ-րէ գրոց մէջ սովորած ըլլալով Սլաւեան լեզուն, ամենքն ալ մէ ե- նոյն բարբառս -նին որն որ Միւրիլեան ըսուած լեզուին ամենէն մօտն է², և թէ Մօսկովները Սլաւեան լեզուն չառած՝ արևելեան կրթութիւնը ունէին, բայց վերջո կորսընցունելով զայն, նոր կրթութեան շատ դժուարութեամբ վարժեցան. և թէ՛ ինչպէս իրենց Սլաւ լեզուն՝ նոյնպէս և իրենց ոգին գրեթէ պաղեցաւ, յառաջադիմութիւնը դադարեցաւ, մէկ խօսքով, բարբառս եղան. վերջապէս Մօսկովները, ինչպէս կը ցուցընէ և իրենց պատմութեանը բոլոր ընթացքը, երեքտասաներորդ դարէն առաջ բաժնուած էին թէ՛ Սլաւներէն և թէ՛ Լաւրոպիոյ օտար ժողովուրդներէն. նոյնպէս և արևելեան

1 Միւրիլեան ըսուած լեզուովը որով թարգմանեալ էին Սուրբ գիրքերը :
 2 Իսկ բուն Սլաւները ութը զանազան լեզու կը խօսին :

կայսրութեան կառավարութեան տակ ըլլող Մօսկովները, մինչեւ տասնութեց և տասնութը դարերը, ոչ խաղախնեւուն կրնային հաւատարիլ, ոչ ինչաց և ոչ բոլոր՝ Եւրոպիոյ ուրիշ ժողովրդոց վասն զի ասոնց մէջ եղած տարբերութիւնը չէ թէ մէկ կամ երկու՝ այլ շատ քիչ տարբերութիւն մըն է: Այսպէս է Միւլլերին նկարագրութիւնը:

Սկրսինք մենք բոլոր այս դէպքերուս ճշմարտութիւնը ցուցընել: Սակայն կը պարտաւորիմք ըսելու նախ, և այն՝ գոհ սրտիւ, թէ Տաճկաստանու կամ Եւրոպի Սլաւները կամ ո՛ր և ի՞նչ օտարական անձինք, մեր ըսածներուն մէջ շատ նորութիւններ աւանելու ըլլան նէ, պէտք է գիտնան որ, այս դէպքերս շատ աղէկ ծանօթ են Մօսկովի մեծ Ռուսաց և մենք՝ ըստ մեծի մասին՝ Ռուսաց խիստ երևելի իմաստուններուն ապացոյցներովը պիտի հաստատեմք նոյն դէպքերը: Յիրաւի այն իմաստնոց պատմական քննութիւններուն նպատակը մեր նպատակին համաձայն չէ: անոնց ըրած քննութիւնները Մօսկովաց գիտնականութեանը միայն վերաբերեալ է: Բայց և նոյն իսկ գիտնականութեան վերաբերեալ քննութեանց մէջ աւելի պարզ կ'երևին այն գործողութիւնները՝ զորոնք սկըսեր էր ցուցընել Միւլլեր՝ անցեալ դարուն կէսերը:

Այն դէպքերէն յայտնի կ'երևի ինչո՞ւ համար Մօսկովները ջնջեցին զկրթութիւնը փոքր Ռուսիոյ մէջ, ինչո՞ւ կը ջնջեն դեռ ինչաստանու մէջ, և ինչո՞ւ Գալիցիոյ ջնջել նաև օտար ժողովուրդներուն կրթութիւնը թէ որ իրենց իշխանութեանը տակ իննան անոնք: վերջապէս ինչո՞ւ, ինչպէս վերը ըսինք, Մօսկովի լաւագոյն ինքնակալը անգամ ուրիշ բան չի կրնար ըլլալ բայց եթէ բռնաւոր մը այն ամեն նուաճեալ ժողովրդոց համար որոնց կրթութիւնը Մօսկովներուն կրթութենէն աւելի է: Ահաւասիկ Ռուսիոյ ներկայ փիճակին ճշմարիտ պատճառները, որոնք ոչ Միապետական ինքնիշխան կառավարութենէն առաջ կուգան և ոչ Դադարաց տիրապետութենէն:

Բայց նախ՝ Միւլլեր պատմագրին հաղածուելուն պատահարը քննեմք, որ՝ Ռուսաց աշխարհագրութեանը դիւրացընելու համար պատմութեան մէջ հրաշխարհաբանները նկարագրելուն պատճառաւ՝ Տիւրպուրիկի

կառավարութեան առաջին զոհը եղաւ :

Քարամզին՝ Ռուսիոյ կայսրութեան երեւելի պատմագիրը կ'ըսէ :

« Միւլէր իր պատմական գրութեանցը համար հայածանքի »
 « նիւթ մը ըլլալ՝ անհաւատալի կ'երեւի այսօր : Արատեմիային »
 « անդամները դատեցին զինքը ըստ կայսերական հրամանին . . . »
 « Պատմութիւնը իր վշտագին հիւանդութեամբը վերջացաւ . . . »
 « Արդէն տպագրեալ իւր պատմական քննութիւնները ջրն »
 « ջուեցան : Վերջապէս հաւանեցաւ Միւլէր, որ Ռուսք՝ Ռօք »
 « սօլան ըլլան, բայց չէ թէ հին Ռօքսօլան ժողովուրդը՝ : »

Ահա ասիկ այս նիւթիս վերաբերեալ տեղեկութեանց յառաջարանը . Տաճկաստանու բնակիչք ի՞նչ բան կրնան սպասել Մօսկովաց կրթութեանէն . ահա ասիկ և ասոնց քաղաքականութեանը օրինակը, որուն զոհը եղան խաղախները, ինչերը և ուրիշ նուաճեալ ժողովուրդք . անշուշտ նոյնպէս կ'ըլլան և օտար ազգերն ալ թէ որ Մօսկովաց իշխանութեանը տակ իննան :

Քարամզինին պատմութեանը վերաբերեալ քանի մը համառօտ պարագաներ յիշենք հոս, որոնք նոյն պատմիչին ծանր խօսքերը կը հաստատեն :

Ինչպէս տեսանք, Միւլէր պատմագրին առաջ բերած ապացոյցներուն վախճանը այն է որ՝ Մօսկովները Ֆինեան ըլլալով թէ՛ սերնդով և թէ՛ ցեղիւ, զորօրինակ կը ցուցնէ՝ ամեն ազգին սկիզբը յայտնող և իրենց սփորական կենացը պատմութիւնը, աատուերկու դարուն վերջերը՝ թողուցին իրենց Ֆինեան լեզուն նոյնպէս և արեւելեան կրթութիւննին . իսկ Ռուսիոյ Արեւելեան Մօսկովները՝ աասնրվեց ու աասնրեօթը դարերուն մէջ հապիւ կրցան ընդունիլ Աւրոպական կրթութիւնը, և այն շատ դժուարութեամբ և դանդաղութեամբ (մանաւանդ որ նոյն կրթութեանը քրիստոնէական կրօնին հետ մէկ տեղ կոստանդնուպօսէն տարածուեցաւ ասոնց մէջ, այսինքն այնպիսի տեղէ մը որ այն ժամանակը անշուշտ կարող չէր կենդանութիւն տալ ժողովրդոց) . այս պատճառաւ Մօսկովները զուրկ մնացին թէ՛ արեւելեան և

1 Քարամզին պատմ. հաս. Ա. ծանօթութիւն Ա. Բեթրպուրիկ հրատարակը :
 2 1170 էն մինչև 1220 տարին :

Թէ՛ Լաւրոպական կրթութիւններէն , մէկ խօսքով , կատարեալ բար-
բարոս եղան : Այսպէս է Միւլէրին քննութեանցը վախճանը ,
Բայց այս քննութեանց հետ մէկ տեղ՝ Միւլէր՝ Ռուս ժողովրդ-
դոց (այսինքն Վարակ Ռուսներէն ու Տիւրիք իշխաններէն նուաճ-
եալ ժողովրդոց) պատմութեանը հոգին ՚ի լոյս հանողներուն
խիստ երեւելին եղաւ : Բօնիսքի անուն յունադաւան արքեպիսկո-
սը այս ատեններս սկըսերէր գրել Պատմ. Ռուսաց , Խաչիներն պատ-
մութիւնը : Այս գրուածքը՝ Լաւրոպիոյ՝ ժողովրդոց ուղղեալ տե-
սակ մը բողոք էր ՚ի նպատ խաղախաց որոնք այն ժամանակը
կատարեալ անբանութեան հասած չէին դեռ , զորօրինակ եղած
են մեր օրերը , Մօսկովաց երկար տիրապետութեանը սակ : Եր-
եալ հեղինակը կը ցուցնէ թէ խաղախները՝ Վարակ Ռուսաց
և Տիւրիք իշխանութեան հպատակ ըլլող Մօսկովներուն հետ բըռ-
նի միաբանեցան , ըստ որում հաւատքով ալ մէկ էին , սակայն ա-
նոնց իշխանութեանը սակ անգամ մասնաւոր ժողովուրդ մը ձեաց-
եալ էին միշտ : Բէթրպուրկի կառավարութիւնը՝ ինչպէս այսօր յա-
նուն հաւատոյ համոզելով բոլոր ազգերը և մանաւանդ Տաճկաս-
տանու յունադաւան քրիստոնեաները գլուխ հանել կ'ուզէ
իւր աշխարհակալութիւնը , նոյնպէս կ'ընէր և այն ատեն : Բօ-
նիսքի արքեպիսկոպոսը խիստ ազդու ոճով մը կը բացատրէ թէ՛
Մօսկովաց հաւատքին օրինորդութեանը յուսալով խափուեցան
խաղախները : Զայտնի է ամենուն որ փոքր Ռուսիոյ խա-
ղախները իհերուն մէկ մասէն հալածեալ՝ հաւատոյ համաձայ-
նութեան պատճառաւ միացան Մօսկովաց հետ : Սակայն՝ ինչպէս
յիշեալ արքեպիսկոպոսը կը ցուցնէ , փոքր Ռուսք թէպէտ Մօս-
կովաց դաւանանքը ունին , բայց արարողութեանց մէջ կատարեալ
տարբերութիւն կայ : Փոքր Ռուսաց քրիստոնէական կրօնքը ա-
ւելի ներքին է , և հերձուած չի կայ մէջերնին : Իսկ Ռուսաց քր-
իստոնէական կրօնքին մէջ շատ հերձուածներ կան : Այս մասին
Բօնիսքի արքեպիսկոպոսը կ'ըսէ . « Մօսկովի մէջ այնչափ հաւատք
» կայ որչափ տուն կայ . միւլենոյն տան մէջ բնակող ընտանիքի մը
» անդամները , հաւատոյ տարբերութեան պատճառաւ չեն կրը-

1 Այսինքն իրենց հաւատքին հետ մէկ ըլլալուն վրայ խափուեցան . օրթոտոքս բառը , որ
ուղղափառ ըսել է , իրենց Յունադաւան հաւատքին կուտան Ռուսները :

« Կար մէկ սեղանի վրայ կերակուր ուտել »¹ : Դարձեալ, յիշեալ Արքեպիսկոպոսը շատ ազդու ոճով մը կը նկարագրէ Սասնայի կոմիտերուն հանած հալածանքը թաղախներուն դէմ. այս մասին խիստ շատ անգթութեան գործոց մէջ յետագայ դէպքը կը յիշէ :

« Կաթ խմող մանկտին, կ'ըսէ, մօրերնուն ծոցէն կը յախշտակէ »

« Ինչ, և կը բռնադատէին զասոնք Անտոն Գործակալաց պզտի շուները »

« անուցանելու իրենց կաթովը »² : « Բնութագրուրկի կառավարութեան կողմանէ վաքր Ռուսիոյ մէջ հաստատուող գողոնի դիմաց մէկուն վրայ խօսելով նոյն արքեպիսկոպոսը, այսպէս կ'ըսէ. « Թիւոր Աստուծոյ մատը շարժէր զհողը՝ Տեսուչներուն (Մինիստրո) հրամանաւը թափուող արիւններու աղբիւր մը կը բղխէր նոյն հողէն »³ : Փոքր Ռուսաց վրայ Բօնիսքի արքեպիսկոպոսին պատմած այս գործողութիւնները՝ Միւլէրի պատմագրին վերոյիշեալ տեսական (Թէօրիք) քննութիւնները կը հաստատեն : Բօնիսքի արքեպիսկոպոսին պատմութեանը տպագրութեան հրամանը քանի մը տարուան գործք է դեռ, և այն՝ արտաքոյ կարգի վանազան պարագաներու պատճառաւ³ : Բայց նոյն պատմութեան բազմաթիւ և հին օրինակները, որոնք հասան մինչեւ մեզի, անժխտելի կերպով կը հաստատեն թէ Բնութագրուրկի կառավարութիւնը տեղեակ էր այն պատմութեանը երբ գրուեցաւ : Այս պատմութեանս հետ Միւլէրին յիշեալ քննութեանցը համաձայնութիւնը խիստ զարմանալի է : Բնութագրուրկի կառավարութիւնը, որ ըստ պարագայից՝ երբեմն իւր Օրթօտոքս հաւատքը ցուցնելով և երբեմն իր Սլաւեան սկիզբը յառաջ քշելով Տաճկաստանու քրիստոնէսոյնները խափելու կ'աշխատի արդէն, այն կառավարութիւնը, կ'ըստելք, դո՛հ աչքով մը չի տեսաւ Միւլէրին պատմութեանը նկարած դէպքերը՝ որ Տէրութեան քաղաքականութեանը բոլորովին հակառակ էին : Վասնորոյ նախ Միւլէրին վրայ յարձակեցան, վասն զի ամենէն վտանգաւորն էր այն :

1 Պատմութիւն Բօնիսքի եր . 230 :

2 Նոյն եր . 231-243 :

3 Մօսկայի Ռուսաց պատմական ընկերութիւնը Տէրութեան հրաման տուաւ այս օգտակար գրուածքին տպագրութեանը որուն անունն է պատմութիւն փոքր Ռուսաց : Այս հրատարակութեանս համար խափանուեցաւ նոյն ընկերութիւնը 1848ին, և իւր ատենագրութեան Ռոսիսքի, հալածեցաւ :

Պերակուտին մեծ ատենը որոշեց Միւլէրին դատը, Ահաւ
ւասիկ այն վճիռին համառօտութիւնը:

« Այս գործքիս մէջ (այսինքն Մօսկովաց սկիզբին, ցեղին և
« կրթութեանը վերաբերեալ խնդրոց մէջ) այնպէս որոշուեցաւ
« որ՝ օտարականներէն աւելի Ռուս գիտուններուն ըսածին հա-
« ռատարմութիւն ընելու է: Միւլէրին ատենաբանութիւնը և իր
« նախադասութեանը Ռուսիոյ լեզու չի տպուեցան, և բոլորովին ջնջուե-
« ցան՝: »

Բարամզին կը յայտնէ մեզի թէ, վերջապէս հաւանեցաւ Միւլ-
էր Ռուսիոյ Տէրութեան ուղածին, բայց պայմանաւ, և հետե-
րութեանը մէջ:

Կատարինէ Բ. Ռուսաց Կայսրուհին, որուն Կառավարու-
թիւնը աղէկ ճանչնալու համար Լզղիւր անուն պատմագրին ըսա-
ծը պէտք է յիշեմք. « Կատարինէ ին Կառավարութիւնը, կ'ըսէ Լզ-
« ղիւր. երբ մէկ կողմէն հրապարակաւ վիճաբանել կուտար թէ
« գիւղականաց գերութիւնը խաբանել արդեօք աւելի շահաւոր
« է Ռուսիոյ՝ չէ՛նէ հաստատել, երբ մէկ կողմէն այս նիւթը
« քննել կուտար, մէկայ կողմէն խաղախներուն մինչեւ այն ատեն
« ունեցած պղտիկ ազատութիւնն ալ կը ջնջէր, խախանելով այն ի-
« ըսուները որ հրաման կուտար խաղախներուն իրենց աւերներէն
« ազատելու թէ որ նեղութիւն կրեն անոնց քով . . . » Ռուսա-
նոյն Կատարինէ Կայսրուհին, կ'ըսեմք այսպէս գրեց բուն իր ձե-
ռօքը. « Վասնիդեմէն կ'ըլլայ եթէ Միւլէրին³ վարդապետութիւ-
« նը չի խախանուի՝ որ մեծ Ռուս ազգին սկիզբը Ֆիննցի է կ'ը-
« սէ: Երկուրեւան գայթակղութիւնը և արտունջը որդի բա-
« արոյցն է որ անոնց սկիզբը տարբեր է իրարմէ: »

Արչաթի ստակ ծախք չեղաւ, և ի՞նչ միջոցներ ՚ի գործ չի գրին
որպէս զի բոլոր Եւրոպան և մանաւանդ Տաճկաստանու քրիս-
տոնեայ Սլաւները՝ Ռուսիոյ հպատակ ըլլող հին ազգաց պատմու-
թիւնը ուրիշ կերպ չի կարենան ճանչնալ բայց եթէ ըստ կամաց
Բեթրպուրկի Կառավարութեան: - Միւլէրի հալածանքը, և Կա-

1 Քննութիւն Սլաւաց, Ս. Բեթերգպուրկ 1845, գլ. 10-21.
2 Լզղիւր պատմ. խաղախաց հատ. Բ. եր. 236-237:
3 Այս անձը արատեմիային անդամն էր:
4 Լզղիւր պատմ. հատ. Բ. գլ. 23:

տարինէ կայսրուհւոյն վերոյիշեալ խօսքերը կը հաստատեն ըսած
նիս :

Այսպէս է մեր ըրած հարցմունքներուն պատասխանը : Ահա
ւասիկ ինչո՛ւ համար Մ'օսկովայ և ընդհանրապէս Ռուսիոյ հպա-
տակ ըլող հին ազգաց պատմութիւնը անձանօթ է , և ահաւա-
սիկ ինչո՛ւ համար ինքզինքը գիտցող ամեն մարդ պէտք է աղէկ
ճանչնայ Մ'օսկովներուն ճշմարիտ սկիզբը և ցեղը : Այս ժո-
ղովուրդը՝ յանուն Սլաւեան սերնդոյ և յանուն Օրթոտօքս
հաւատոյ կը գործէ բոլոր ըրածը : Յանուն Սլաւ սերնդոյ և յա-
նուն Օրթոտօքս հաւատոյ անբան ժողովուրդ մը ձեացուցին ա-
տնք զխաղախները երկար՝ չարչարանքէ վերջը , որուն մէկ մասը
միայն նկարագրեց Քօնիսքի Արքեպիսկոպոսը , սակայն այնչափէն
կրնայ մնացորդը ենթադրել ամեն մարդ : Դարձեալ Մ'օսկովները
յանուն Սլաւ սերնդոյ և յանուն Օրթոտօքս հաւատոյ անբան
ժողովուրդ մը ընելու կ'աշխատին Ռուսիոյ իէկ գաւառներուն
բնակիչները և Վեննայու իէհաստանը : Վերջապէս յանուն Սլաւ
սերնդոյ և յանուն Օրթոտօքս հաւատոյ արգիլել կ'ուզեն այս
օր այն մտական գեղեցիկ շարժումը և այն աղատութիւնը որ օր
աւուր աւելի կը ծաւալին Սրժի , Բուլղարի և Տաճկաստանու
ուրիշ գաւառաց մէջ :

Բայց Լոյիսաբէթ Բեդրովնա և կատարինէ 'Բ . կայսրուհիք
և ուրիշ ճշմարտութիւնը քննելու ծոյլ հեղինակք՝ որչա՛փ ալ
մէկզմէկու ետեւէն բազի մը պէս կրկնեն Տիւրիք իշխանաց ազ-
գահամարը , և վեցերորդ դարէն սկսեալ մինչեւ ցտասու իրեք
դար Նովհորոտի , Տնեբերի և Տնեսդերի կողմերը ըլող «յ» Աշ-
խաններան հոգարակ ժողովրդոց պատմութիւնը որչա՛փ ալ Մ'օսկովի բնակիչ-
ներուն պատմութեանը հետ միացրնեն , այսու ամենայնիւ ո՛չ զճըշ-
մարտութիւնը կրնան ծածկել , և ո՛չ այն ահագին տարբերու-
թիւնը կրնան եղծել որ կը զատէ իրարմէ յիշեալ երկու ժողո-
վուրդները , և կը զատէ դարձեալ Մ'օսկովները Աւրոպիոյ բոլոր
ազգերէն :

Բարամզինին գրած Ռուսիոյ պատմութիւնը՝ բացայայտ կը
ցուցնէ բոլոր այս դէպքերը , Նոյն պատմիչը թէպէտ Տիւրիք
իշխանաց պատմութիւնը գրեց միայն , բայց Սլաւներուն և Մ'օս-

կամներուն Սեղեթն — ցեղն վրայ հիմնելով իւր նկատագրութիւնը
 կը ցուցընէ նախ՝ թէ պատերազմող կամ Վարակ Ռուսներուն
 հետ Ռիւրիք իշխանները աէր էին Նովհորոտի, Տնեթեթե եւ Տնեպեթե
 Սլաւաց, նոյնպէս կիւիւիէն եւ Քիւնեան կամ Չոսո ըստող երկրներուն, ընդ մեծը
 33 թիւին Սմակիւներոս կամ Քէթ Ռոսսաց, և յետոյ այսպէս կըսէ. «Այս Քիւնեան
 Ռոսսաները (Քարամուղին այս անունը կուտայ հին Սմակուլաց) ասոնք,
 կ'ըսէ, ահար ու վայրի ժողովուրդ մը չէին տասներորդ դարոյն մէջ,
 զորօրինակ կը ցուցընէ զերեւնք Դասիա. այլ Սմուէնաքի ու Նովհորո-
 տոսի Սլաւներուն չափ զօրաւոր էին՝ ։» Եւ որովհետեւ կը կար-
 ծեն թէ Քիւնեան Ռուսները իրենց երկիրը և քաղաքները Սլա-
 վաւներուն յանձնեցին, Քարամուղին խիստ որոշ կերպով կը հաս-
 կը ցուեն որ Քիւնեցիք ոչ երբէք իրենց երկիրը Սլաւաց յանձ-
 նեցին այլ Ռիւրիք իշխաններուն Սերնորոցը ԻշխանաՔեանը ժամանակ Սլաւ-
 եան լեզուն ընդունեցան² ։

Օրիճաղելի բան է ենթադրել թէ Ռիւրիք իշխաններէն ետքը՝
 յաջորդ երկու դարերուն մէջ ընդունեցան Քիւնեանք զՍլաւ-
 եան լեզուն. այսպէս ենթադրել մարդկային սերնդեան պատմու-
 թիւնը չի դիտնալ է ։

Ազէքսանդր կայսրէն 'ի վեր՝ Սմակուիւները՝ մինչև չաստիճան մը,
 պատմական քննութիւններ ընելու իրաւունքը սկըսան վայելել.
 գոնէ այսօր Տերութիւնը չի սրտօտեր զժողովուրդը իր հին պատ-
 մութեանցը վերաբերեալ քննութիւններ ընելուն համար ։ Քա-
 րամուղին պատմիչը ապացոյց մըն է մեզ այս մասին ։ Ռուսիոյ կայս-
 րութեան զինուորական դպրոցին համար յօրինեալ գրուածքի մը
 մէջ կը տեսնեմք որ՝ «Օրելի, Քալէնկայի, Դոնկայի, Սոս-
 » քուայի, Վլատիմիրի, Լարոսլաւի, Քօսդրոմայի, Ալեքսի-
 » Նովհորոտի կառավարութեանց մէջ՝ երկուսասաներորդ դարոյն
 » դէպ 'ի կէսերը մտաւ Սլաւեան լեզուն³ ։»

Ընդ հակառակն՝ շատ մեծ ապացոյցներ ունիմք մենք են-
 թադրելու թէ՛ այս կառավարութեանց մէջ՝ Քիւնեան լեզուին
 դէմ Սլաւ լեզուին ըրած յաղթութիւնը ետքէն եղաւ, այսինքն

1 Քարամուղին պատմութիւն, հատ. Ա. դ. Բ. և ծանօթութիւնք ։
 2 Նոյն. վերջաւորութիւն զվսոյ ։
 3 Օրագիր Ռուս զինուորական դպրոցներու համար Սուրբ Բեթերզպուրկ, 1847, թիւ
 260. և օրագիր դաստ. նախ. 1848, մայիս ։

աասուիրեք դարոյն մօտ (1170 — 1220),

Ի այց թէև ենթադրելու ըլլանք որ երկոտասաներորդ դարոյն կէսերը մտաւ Սլաւեան լեզուն իրենց մէջ, (թէպէտ այսպէս համարիլ, Բարամզինին բոլոր պատմութիւնը, բոլոր ժամանակագրութիւնը և Սօսկովի մէջ պատմած բոլոր դեպքերը տակն ու վրայ ընել է), այսուամենայնիւ յայտնի կ'ըլլայ թէ մինչև այն ժամանակը, Սօսկովները արևելեան կրթութիւն մը ունէին (որուն յարգը Ներուպայոց մէկ բարբարոս մասը միայն կարող չէ հասկընալու, վասն զի կատարեալ Ներուպայոցի չէ) ուստի մինչև այն ժամանակը, կ'ըսեմք, Սօսկովները կրթեալ էին. բայց 'եաքէն իրենց Ֆինեան լեզուն Սլաւի փոխելով բարբարոս եղան, չէ թէ Սլաւեան լեզուն պատճառաւ, այլ վասն զի ասոնց սովորած Սլաւի Սիրիլեան լեզուն, երկոտասաներորդ դարոյն սկիզբները, բուն մտաւ լեզուի եղած էր. և այն լեզուն 'ունեցած բոլոր գրականութիւնը սուրբ գիրքն էր միայն, զոր կոստանդնուպոլսոյ եկեղեցականք կը գործածէին. Այս վերջին գէպքը յիշելը բաւական է ' համոզելու որ Սօսկովաց Ֆինեան ազգութիւնը դադրելով պէտք էր բարբարոս ըլլային. ուստի և իրենց լեզուն հետ մէկ տեղ ոգինին ալ պաղեցաւ. չէին կրնար առաջ երթալ :

Այս վիճակիս մէջ ահա գտան զասոնք Դադարները. Դադարաց իշխանութեանը տակ թէպէտ կը յառաջանային Սօսկովները ըստ ներելոյն իրենց վիճակին, սակայն ասոնց կրթութեանը խառնըն սկիզբը՝ այն յառաջագիտութիւնը շատ դանդաղելու պատճառ մըն էր. Վասնորոյ, երկու հարիւր յիսուն տարուան անկախութենէ վերջը՝ դեռ տասներութը դարոյն սկիզբները հազիւ կրցան հասկընալ Սօսկովները այն սոսկալի կրթութեան յարգը՝ որ Մեծն Պետրոսին քննիչն հետ ընկերացեալ էր. (իսկան ահարկուանուն կայսեր ատեն՝ Սօսկովները կարող չէին դեռ հասկընալու Մեծն Պետրոսին նպատակը) :

Ահա ասիկ ինչո՞ւ համար, դեռ տասներութերորդ դարոյն կէսերը, այն աստիճան բարբարոս էին Սօսկովները՝ որ մինչև պատմական քննութիւններ ընող իմաստունները կը հալածէին. և մինչև՝ նոյն դարոյն կէսէն վերջը, Տերոֆեան սեփականութիւն մը կը հա-

Տարեին այն ուսումնական գրքածիր որոնց հեղինակները դաշտումստեղ էին՝

Տողոր այն դէպքերը , զորոնք յիշատակեցինք հոս , խիստ ուրոշ կերպով կը յայտնեն . ինչո՞ւ համար այս աասնրիններորդ դաւրոյս մէջ Ռուսիոյ երկրին սարածութեանը բողոր գեղերը ո՛չ դպրոց մը ունին և ո՛չ մասնաւոր սպարան մը . դարձեալ ինչո՞ւ համար Մսկովները , ինչպէս վերը ցուցուցինք , կը ջնջեն զկոթութիւնը փոքր Ռուսիոյ և յէհի մէջ :

Վերջապէս կարճ խօսքով կ'ըսենք թէ , բողոր այս պատճառները բաւական են համողելու որ Ռուսիան իրեն տակ նուաճեալ ժողովուրդները չէ թէ միայն կը Ռուսացընէ , այլ Բուրաս կ'ընէ զանոնք , նաև սոսիւս և այսպէս ընելու , որովհետև խաբու պիտոյ ազգերին շատ ետք է ինք , և այն՝ չէ թէ մէկ , երկու և երեք , այլ խիստ շատ դարերու միջոցներով :

Գանք հիմա գոածնիս համառօտելու :

Մեր ներկայ գրութեան նպատակը ուրիշ բան չէ , բայց եթէ (Պամանեանց և Ռուսաց խնդրոյն մէջ (որ պատերազմի նիւթ մը եղած է այսօր) , այն խնդրոյն մէջ , կ'ըսենք , կրթութեան և ազատութեան մասերը քննել , և միանդամայն համապատասխան կամ համառուութեան , և վերջապէս համայնութեան² խընդիրները նկարագրել . Այս օրուան զաշխարհք յուզող վէճերը՝ այս խնդիրները խիստ պայծառութեամբ կը յայտնեն . բայց զատոնք կիսկատար գիտնալը ստութեան միայն շահաւոր է , վասն զի բանին աղէկ չի համողուելով՝ վերջապէս նախապաշարմամբ կը քննեն ու կը դատեն զայն . իսկ կատարեալ տեղեկութիւնը ըզճշմարտութիւնը ՚ի լոյս կը հանէ . կրթութեան մասին մեր նրկարագրած դէպքերը յայտնի կ'ապացուցանեն որ Ռուսիոյ դէմ Տաճկաստանը պաշտպանել՝ բարբարոսութեան դէմ զկրթութիւնը պաշտպանել է . Նաև համապատասխան կամ համառուութեան խնդիրներու և ծանրակռիշ ու մանրամասն քննութիւնները խիստ

1 Այս գրութեանը եկող ստակին շահը միայն կը վճարէին հեղինակաց . 1761ին հրատարակել հարիւրին 12ի որոշեց նայն շահը :

2 Բանալուիզմը , համապատասխան , բանախօսիզմը , համառուութիւն , բանկրտիզմը , համայնութիւն . այս բառերը իրենց ձիշա թարգմանութեամբը դրինք հոս , որոնց նշանակութիւնը այս է . Ռուսիոյ Տերութիւնը իր սկիզբը Սլաւեան ցուցունելով այնպէս Ռուսացընէ կ'ուզէ ժողովուրդները և իւր Զունագաւան հաւատքին հետ միացնել զանոնք : Այսինքն մէկ ազգ ու մէկ հաւատք ընել զաշխարհ : Եանօթ . Թարգ :

շահաւոր են Տաճկաստանին , նոյնպէս և համայնութեան խնդիրը որ թէպէտ ինքնիրուն աննշան խնդիր մըն է այս , սակայն համառուութեան հետ միանալով , իբր իւր օժանդակը , նշանաւոր խնդիր մը կ'ըլլայ :

Ուստի սկստիմք վերայիշեալ համառուութեան կամ համարալաւութեան և համայնութեան կրկին խնդիրները հետզհետէ և համառօտութեամբ յիշել , սակայն Սլաւեան զանազան լեզուներուն անտեղեակ անձինք , որ այս լեզուներուն օգնականութեամբը չեն կրնար այս մասին բաւական տեղեկութիւն ստանալ , այն խոհական անձինքները , կ'ըսենք , անշուշտ գոհ կ'ըլլան եթէ ()սմանեան և Ռուսիոյ վեճին մէջ կրթութեան և ազատութեան վերաբերեալ մեր գրութեամբք քանի մը ծանօթութեամբ լրացրնենք :

Երկու գլխաւոր նիւթ յիշատակեցինք մեր ներկայ յօդուածին մէջ :

Ա. Խաղախներուն , Լեհերուն և դեռ ուրիշ ժողովրդոց տէրը ըլլող Սօսկովները , Մեծ Ռուսք , բաղդաատութեամբ Լաւրոպիոյ բոլոր ժողովրդոց , շատ կար են կրթութեան մէջ , և այն չէ թէ մէկ , երկու և երեք , այլ խիստ շատ դարերու միջոցներով :

Այս մասին ըսածնիս լրացրնելու համար Բարամզինին պատմութեանը մէկ կտորը կ'աւելցրնենք հոս , որ կ'ըսէ . Սօսկովները՝ Սօսքուայի կառավարութեան բնակիչներէն սկսեալ , Սլաւ չեն , ո՛չ սերնդով , ո՛չ ցեղ'ւ . Այսպէս և ուրիշ հեղինակաց բնութիւնները կը հաստատեն թէ , Սլաւեան լեզուն յերեքսասաներորդ դարոյն մտաւ Ֆին ազգին մէջ :

Բարամզին , Ռուսիոյ Տէրութեանը պաշտօնական պատմագիրը , կ'ըսէ դարձեալ . « Շատ հաւանական բան է որ Սլաւներուն հին բնակութիւնը , դէպ 'ի արեւելք , մինչև ցՍմօլէնսքի » և « Չէրնիկովի կառավարութիւնները կը տարածուէր' » :

Սօսկովաց և Խաղախներուն մէջ եղած հիմակուան սահմանագրութիւնը գրեթէ յիշեալ երկիրներն են :

Պատերազմող կամ Վարակ Ռուսաց և Տիւրիք իշխաններուն հպատակ ըլլող Սլաւ և Ֆին ժողովրդոց հաշիւը ընելով Բարամզին կը յայտնէ թէ՝ հիմակուան երեսունըհինգ միլիոն Սօսկով

1 Բարամզին պատմ . տիպ V . Բեթերզպուրկի , 1818 հատ . Ա . ծանօթութիւն 68 :

բնակիչ ունեցող երկիրներուն բոլոր սարածութեանը մէջ՝ Սլաւները յետագայ երկիրները կը բնակէին, այսինքն՝ ի Բալուկայ, յ(Օ)րէլ (կամ Դուլա), ի Սմօլէնսք, ի Տարու¹, և Նովկորոսի կառավարութեան հարաւային կողմը², իսկ Ֆինեանց կամ Չուսերուն³ բնակութիւնն էր Դալէրի, Եարօւլալի, Բօսորօմայի, Նէճնի—Նովկորոսի, Վլատիմիրի և Մօսքուայի կառավարութիւնները՝ որ այս անգիւրը մեծ Ռուսիոյ կեդրոնն են⁴ :

Ռուսիոյ պատմութեանը առաջին հատորին համար Բարամզիննին շինած աշխարհացոյցը Մօսքուա գետին բղխումը միայն Սլաւեանց երկիրներուն մէջ կը նշանէ, իսկ այս գետին ամբողջ ընթացքը Ֆինեան Մէրա ըստած երկիրներուն մէջէն է : Յիշեալ հեղինակը, ժողովրդոց վրայ ըրած հաշուովը չէ թէ Սլաւներուն՝ այլ Ֆինեանց բնակութիւնը կը հաստատէ Մօսքուայի վիճակին մէջ⁵ :

« Ֆինեան Ռուսները, կ'ըսէ Բարամզինն՝ (այսինքն Վարակ Ռուսաց և Տիւրիք իշխանաց հպատակ ըլլող Ֆինեանք) այնպէս վայրենի չէին, զորօրինակ կը նկարագրէ զիրենք Դասիտասանք՝ չէ թէ միայն հաստատ բնակութիւն՝ այլ և քաղաքներ ունէին⁶ : »

Բարամզինն կը ցուցնէ դարձեալ թէ՛ տասներորդ դարոյն մէջ Ֆինեան Մօսկովները, Սլաւներուն չափ զօրաւոր էին⁷ :

Անոնց՝ որ կը կարծեն թէ Ֆինեանք Մօսկովի երկիրները Սլաւներուն յանձնեցին, այսպէս կը պատասխանէ Բարամզինն, Տիւրիք իշխանաց վրայ դրած իր պատմութեան վերջաւորութեանը մէջ, « Տիւրիք իշխաններուն ամենէն երեւելի գործքը, կ'ըսէ, այն էր որ՝ Ֆինեանց մէկ մասը Սլաւներուն հետ կատարեալ միութիւն ըրին, մինչև Վերջուկս՝ Վէս, Մէրա, Մարօմա Սլաւի Էրիսթրեցան⁸ : »

Տիւրիք իշխաններէն վերջը՝ Ֆինեանք իրենց լեզուն ձգելով

1 Ասոնք զանազան կառավարութիւն կամ կուսակալութիւն են :
 2 Նոյն պատմ. հատ. Ա. կր. 32-33 :
 3 Ասոնք զանազան ցեղ են, ինչպէս Վէս, Մէրա, Մարօմա և այլն :
 4 Նոյն կր. 35 :
 5 Նոյն. Ա. ծանօթ. 300 :
 6 Նոյն կր. 37 :
 7 Նոյն Ա. կր. 114 ծանօթ. 275 և 280 :
 8 Նոյն կր. 123 :

ե՞րբ Սլաւեան լեզուն խօսիլ սկսան, չի ծանուցաներ Քարամզին, վասն զի իւր նպատակը՝ Ռուսիոյ կայսրութեան Տէրութիւն մը բաղկանալուն՝ և Տիւրքի իշխաններուն պատմութիւնը գրել էր միայն, Այնչափ յայտնի է այս որ՝ Քարամզին իր պատմութեանը մէջ Տնեքերի ու Տնեսդերի բնակիչներուն խօսքը բողոքովին վերջացուց՝ երբ Տիւրքի իշխաններէն անկախ եղան այն ժողովուրդները։ Այսու ամենայնիւ, իւր պատմութիւնը այնպիսի դէպքեր կը նկարագրէ որ՝ այս հարկաւոր խնդիրները շատ աղէկ ՚ի լոյս կը հանեն։ Ուստի այս հեղինակը՝ Մօսկովի սուրբերուն վարքը պատմողները կը յիշէ, որոնք կը հաստատուն թէ՛ Վլատիմիրի արևելեան կառավարութեանը մէջ քրիստոնէական կրօնքին ըրած կատարեալ յաղթութիւնը տասելրեք դարուն սկիզբը եղաւ, և այն՝ սոսկալի պատերազմէ մը վերջը՝։ Վլատիմիրի կառավարութեան արևելեան մասին մէջ քրիստոնէական կրօնքին ըրած յաղթութեանը թուականը չուրանար Քարամզին, բայց իր յառաջ բերած վկայութեանցը մէջ քանի մը այնպիսի նիւթեր կը նշանակէ, որոնց մեկնութիւնը ինքն ալ չէ կրցեր ընել։ Սակայն անոնց բացատրութիւնը որոշ կերպով կուտան յաջորդ պատմագիրք, և մանաւանդ Վատիմիրի եկեղեցոյն ուսումնասիրող որ հրատարակուեցաւ ՚ի Տիւրքալուրի և ՚ի Մօսքուա 1838 և 1848ին։ Վլատիմիրի կառավարութիւնը Մօսքուայի սահման է, և անոր հին բնակիչները Միւրա ըսուող Ֆինեանք էին այն ատեն, որոնք Մօսքուայի մէջ կը բնակին այսօր, (տես վերը նշանակած ապացոյցներ)։

Ուրեմն պէտք է ընդունիլ թէ՛ Սլաւեան լեզուն տասելրեք դարուն սկիզբը մտաւ Վլատիմիրի մէջ, վասն զի քրիստոնէական հաւատքը Սլաւ լեզուին հետ միատեղ տարածուեցաւ Մօսկովի մէջ։

Մօսկովիէ՛ք անուն ուսուցիչը, զոր իր հայրենակից մեծ Ռուսները թիկերի Ռուս կ'անուանեն, Մօսկովաց ցեղին վրայ հիմնելով իւր պատմութիւնը՝ այսպէս կ'սկսի։ Մօսկովիները, կ'ըսէ, յեղեատարքեր են փոքր Ռուսներէն, այսինքն ընդհանուր Սլաւներէն, Նոյնպէս և այս երկու ժողովուրդոց մէջ եղած հաւատոյ արարողու-

1 Նոյն. Գ. ծանօթ. 153:

Թեանց տարբերութիւնն ալ կը ցուցընէ այն՝ իւր պատմութեանը մէջ՝ :

Ի՞նչ Երկրորդ նիւթը զոր հաստատեցինք այն է որ, տասնիրեք դարոյն մէջ խափանելով Մօսկովայ Ֆինեցիութիւնը նոյնպէս և իրենց արեւելեան կրթութիւնը, անշուշտ շատ դժուարութեամբ պիտի ընդունէին ասոնք Լաւրոպահան կրթութիւնը, նախ՝ վասն զի նոյն կրթութիւնը Սլաւեան լեզուին հետ միատեղ տարածեցաւ մէջերնին, որն որ ուրիշ գրականութիւն չուներ՝ բայց և թէ Սուրբ գրոց թարգմանութիւնը միայն, և տասնիրեք դարոյն մէջ արդէն մեռեալ լեզու մը եղած էր այն. երկրորդ և աւելի մեծ պատճառ՝ վասն զի Մօսկովները այնպիսի աղբիւրէ մը առին (Կոստանդնուպօլսէն) իրենց նոր կեանքը որ շատ ժամանակէ ՚ի վեր ցամքած էր այն աղբիւրը . վասնորոյ յառաջադիմութիւննին դադրեցաւ, բարբարոս եղան, օտարացան Լաւրոպիոյ ամեն ժողովուրդներէն, և բաժնուեցան ասոնցմէ չէ թէ մէկ, երկու և երեք՝ այլ շատ դարերու միջոցներով. Ուստի հարկաւ բռնաւոր ըլլալու էին, ինչպէս և եղան իրենց սակ նուաճեալ բոլոր այն ժողովրդոց համար որոնք Մօսկովներէն աւելի ազատ և աւելի բարեկիրթ էին . Ահաւասիկ այս մասին մեր ապացոյցները, որոնց վրայ զայս կ'աւելցընեմք թէ,

Ըստ ազատութեան մասին, Մօսկովները ազատութեան դէմ ունեցած ատելութիւննին յայանեցին առաջին անգամ, ջնջելով Երկրորդի և Ինքուի ազատութիւնը, և անբան ժողովուրդ մը ձեացընելով զանոնք : Այսպէս խաղախներուն ազատութիւնը ջնջելէն վերջը՝ Մօսկովները՝ մինչև Եկեղեցուն այն խորհուրդն ալ եղծեցին որոնք իրենց գերիները ազատելու կը խորհէին . 1791ին և մայիս 3ին, Եկեղեցուն ստացած հռչակաւոր սահմանադրութեանը՝ հիմը՝ այս գերիներուն ազատութեանը վրայ դրուած էր . սակայն ճիշտ նոյն սահմանադրութեանը պատճառաւ Ռուսիոյ Տէրութիւնը վերջին հարուածը տուաւ Եկեղեցունին . վասն զի վախցաւ այս Տէրութիւնը որ չըլլայ թէ այն գերիներուն

1 Արեւմտութիւն պատմութեանց Կայսերական ընկերութեան Մօսկովայի , 1826-1837 ,
Թիւ 1 եր . 7 :
2 Քօնսդիդիւսիօն :

ազատութիւնը օրինակ մը ըլլայ Մօսկովի գերիներուն : Բէթրալուրկի կառավարութիւնը՝ ամենէն սաստիկ գերութիւնը հաստատեց Ռուսիոյ ինչ գաւառաց մէջ, մինչև անգամ իւր յօժար կամօքը գեղացիի մը շնորհք ընող ազնուականին պատիժը Սիպերիա արսորակ է, թէ՛ և իւր առանձին գործոցը վերաբերեալ ըլլայ ազնուականին ըրած շնորհքը : Բէթրալուրկի կառավարութիւնը այսպէս կը հեռացընէ իր երկրէն նաև Տաճկաստանի հրապատակ ըլլող այն քրիստոնեայ գիւղական գործաւորները, հրնձողները և այլն, որոնք առջի ժամանակները ազատութեամբ կը մանկին նոյն երկրին մէջ :

Հիմակուան լրագիրները կը ծանուցանեն Աւրոպիոյ որ՝ Ռուսարհեստաւորներն անգամ հրաման չունին օտար երկիր ճամբորդութիւն ընելու, մինչև խիստ մեծ տուրք մը չվճարեն :

Դաստիարակութեան մասին, մեր առաջ բերած պատճառները լրացընելու համար, Ռուսիոյ ազգային ուսման տեսուչին, Շիչքով Ժովապետին, յետագայ խօսքերը կ'աւելցընեմք . « Գիտութիւնք այն ժամանակը միայն օգտակար են, կ'ըսէ Ժովապետը, երբ այնպէս գործածեն զանոնք, ինչպէս կը գործածեն աղը, և, երբ չափով սովորեցընեն զանոնք, ըստ վիճակին և ըստ հարկաւորութեանը ամեն մէկուն՝ : » Վերը յիշեցինք նաև նոյն տեսուչին այն խօսքերը որ կ'ըսէր . « Ընդհանուր ժողովրդեան և կամ աոոր մէկ մեծ մասին կարգալ, գրել սովորեցընելը վտանգաւոր է . . . » Շիչքով Ժովապետը, 1814էն սկըսեալ մինչև 1828 տարին պաշտօնատէր էր : 1849ին, Ռուսիոյ տեսուչութեան օրագիրը՝ Ժովապետին այս խօսքերը յիշելէն վերջը կ'ըսէ . « Կրթութեան վերաբերեալ, և ազգութեան ու ճարտարագիտական վրայ հիմնեալ այս ատենաբանութեանս իմաստը պատիւ է Շիչքով Ժովապետին² : »

Մօսկովի գիւղական դպրոցներուն վրայ խօսելով այսպէս կ'ըսէ նոյն օրագիրը³ . « 1803ին ամենեւին գիւղական դպրոց չէ կար Ռուսիոյ մէջ : »

1 Օրագիր Ռուսիոյ . ազգ . դատա . նախ . 1849, նոյեմբեր, Զ . էր : 168 :
 2 Նոյն . էր . 169 :
 3 Նոյն էր . 159 :

Բուն իրենց ծախքովը համալսարանաց մէջ մանող ուսանողաց թիւը 300ի իջեցրնելու համար այսպէս կը գրէ ուսման տեսուչին յիշեալ օրագիրը .

« Մայիս ամսոյն ՂԻն և Սեպտեմբեր ամսոյն ՉԾին երեցան
« յետագայ գերագոյն պատուէրները . Ա. ամեն մէկ համալսարանի
« մէջ իւր ծախքովը ըլլող ուսանող երիտասարդաց և
« կամաւոր ունկնդրաց թիւը 300ի միայն սահմանուի . (Ասկէց
« վերջը կուգայ բժշկաց վարժարանին կանոնը զոր վերը յիշե-
« ցինք) . Բ. Այս համալսարանաց մէջ իրենց ծախքովը ըլլող
« ուսանող երիտասարդաց և կամաւոր ունկնդրաց թիւը եթէ
« 300ը անցնի , այն ատեն նոր ուսանողի ընարութիւն չըլլայ մինչև
« որ յիշեալ թիւը երեք հարիւրի չ'ընայ . » Նոյն օրագիրը կ'ը-
« սէ թէ՛ այս 300 թիւը լցեալ է արդէն Ալատիմիրի (Ֆիլիվ) ,
« Խարբուի և Խաղանի համալսարանաց մէջ . Իսկ Բէթրայուրի և
« Մարտայի համալսարանաց աշակերտներուն թիւը պիտի նուազի ,
« 1850ին՝ . Բնա նոյն օրագրին՝ աշակերտք Համալսարաններէն ել-
« լելէն վերջը չեն կրնար դարձեալ այն համալսարանաց քաղաքնե-
« րուն մէջ բնակիլ , բայց միայն անանք որոնց ծնողքը նոյն քաղաք-
« ներուն մէջ են .

Ահա ասիկ և մանաւոր դպրոցներուն վրայ նոյն օրագրին մեկնութիւնները .

« 1849 տարւոյն ընթացքին մէջ այնպէս որոշուեցաւ որ քը-
« սան մանաւոր դպրոց բացուի միայն Օճնաղան պատ-
« ճառաւ այս դպրոցներուն քառասուն հատը խախտնեցան² .

Մեր այս համառօտ գրութիւնը ամեն վաստէ աղէկ կ'ապա-
« ցուցանէ թէ՛ երբ Ռուսիոյ Տէրութիւնը կը ներէ իր ժողովրդ-
« դեան քայլ մը առաջ երթալու , իսկոյն ասոր յառաջադիմութե-
« նէն զարհուրեալ , աւելի շուտով ետ կը դարձընէ զայն . Այս ող-
« բալի փիճակին պատճառը չէ թէ Բէթրայուրի կառավարութեան
« չար կամքն է , այլ ասոր պատճառը՝ Մ'օսկով ազգին խառն ըս-
« կիղբն է .

(Օսմանեանց և Ռուսաց խնդիրը համապարտութեան և համա-

1 Նոյն 1850 մայ . եր . 18-19 :

2 Նոյն եր . 98 :

յոյնութեան մասին նկարագրելու ատեն՝ դարձեալ կը հարկադրիմք Մօսկովի ուսումնականութեանը և աղատութեանը վրայ խօսիլ, որովհետև այնպէս կարծեն թէ այս Տէրութիւնը կրնայ Տաճկաստանու բնակչաց կրթիչը ըլլալ: Եւրոպա՝ վեր ՚ի վերոյ ծանօթութեամբ մը կը ճանչնայ գեո. զՌուսիոյ Տէրութիւնը: Միշէլէ պատմագիրը ըսաւ որ՝ Գաղղիան 1837էն վերջը սկըսաւ ճանչնալ զճշմարիտ Ռուսաստանը, այսինքն տասնըվեց տարիէ ՚ի վեր: Գաղղիոյ գերագոյն ուսմանց վարժարանի անդամին, այս ծերունի ուսուցչին այդ պարզ ու անկեղծ վկայութիւնը աղէկ կը յայտնէ ինչո՞ւ համար Մօսկովաց ուսումնական և աղատական մեծ յաստատութիւնները այնչափ ճոխ առասպելաբանութեամբ նկարագրեցին: Այս մասին Եւրոպիոյ տգիտութենէն շատ աղէկ օգուտ քաղեց Բէթրայուրկի կառավարութիւնը: Դեռ քիչ ժամանակ առաջ չի տեսա՞նք մենք Անգղիոյ Գոյճ օրագրին խմբագիրներուն հակառակութիւնը, որոնք Օսմանեան և Ռուսիոյ խնդրոյն մէջ մէկ կողման հակամտելով «Տաճկաստանի կառավարութիւնը,» կ'ըսէին, մահմետականաց ձեռքը ըլլալով, Օսմանեանք Ռուսաց դէմ ունեցած վէճերնուն մէջ չեն կրնար Անգղիոյ կառավարութեան սէրը ստանալ, վասն զի Ռուսիոյ Տէրութիւնը քրիստոնեայ է»: Այսպէս խօսելով այս օրագիրը այնպէս մակարերել կուտար թէ՛ Տաճկաստանու քրիստոնեայք աւելի երջանիկ կրնան ըլլալ Ռուսիոյ իշխանութեանը տակ՝ քան թէ ընդ իշխանութեամբ Օսմանեանց:

Այն դէպքերը ու հաշիւները զորոնք յիշատակեցինք հոս ՚ի այս հանելով այս խնդիրը, աղէկ կը հասկըցընեն Ռուսիոյ Տէրութիւնը, ուսումնականութեան և աղատութեան մասին, Տաճկաստանու քրիստոնէից համար ի՞նչ կրնայ ըլլալ, Բայց Տաճկաստանու վերաբերեալ այս խնդիրը կատարեալ բացայայտելու մտք քանի մը ապացոյցներ աւելցընելով հոս կ'ըսեմք թէ՛ Օսմանեան կառավարութիւնը՝ իւր հպատակ քրիստոնէից ուսումնական յառաջադիմութիւնը ոչ երբէք արգիլեց: Մեր նկարած ապացոյցները՝ Սլաւ հեղինակներէ գրեալ Տաճկաստանու պատմութենէն քաղած եմք, Շաֆարձիք պատմիչը յիշեցինք, այն պատմիչը, կ'ըսեմք, զոր Ռուս իմաստունք, տասնըչորս դարէն սկըսեալ մին

չէ ցտասնընթօթը դարուն Սլաւեանց պատմութեան ամենագիտուն հեղինակը կը համարին : Հաճարձիք Չէք ըսուած լեզուով գրուեց այն պատմութիւնը : Ահաւասիկ իր ուսումնական քննութեանցը մէկ յոդուածը :

« Օսմանեանք , կ'ըսէ , Յովհաննէս Քանդակուղէն հրաւիրեալ Յովհաննէս Դ . Տալէօղլին դէմ , Աւրուսիոյ մէջ մըտնելէն ետե հետզհետէ Սրբիւրը , Տուրքարները և Պօնտացիները նուաճեցին . սակայն այս ժողովրդոց ո՛չ լեզուին դասն , ո՛չ բարուցը , ո՛չ սովորութեանցը և ո՛չ անոնց ներքին կենացը վերաբերեալ բաներուն . ու թէպէտ այս հպատակ ազգաց աւագանին ջնջուեցաւ , այսու ամենայնիւ ժողովրդոց մտաւոր յառաջադիմութիւնը չի դադրեցաւ : Մտք տէ՛ր ընդերը կը տնայնայն : Տասնըհինգ ու տասնըվեց դարերուն Օսմանցիները մեր դարոյն Օսմանցոցը նման այլայլած չէին : Կարգ ու կանոն ճանչցող զօրաւոր ժողովուրդ մըն էին Օսմանեանք այն ատենները , և իրենց գլուխը ուղիղ քաղաքականութեամբ զարգարեալ ինքնակալներ ու Պետեր ունէին , մեծ կառավարութիւններ հիմնելու և պահպանելու կարող մարդիկ , և թէպէտ զօտարականները ու զթշնամիները մեասող ու խորտակող , սակայն խաղաղ , համեստ ու քաղցրաբարոյ իրենց համազգեացը և հպատակացը հետ . . . » Հաճարձիքին այս խօսքը , տասնըչորս դարէն մինչև ցտասնընթօթը դար Տաճկաց հպատակ ըլլող բրիտանից բարեբաղդ վիճակը յայանելու առաջին պատճառն է : Իսկ երկրորդ պատճառը , ըստ նոյն հեղինակին , այն է որ , կոստանդընուպօսոյ ապականեալ բարքը , արևելքէն դէպ ՚ի արևմուտք տարածուելով , թէպէտ Սրբիաց ու Տուրքարաց ազնուականները խանդարեց և վերջապէս ասոնց կառավարութիւնները կործանելու պատճառ եղաւ , բայց այն ազգերը , բուն ժողովուրդը , ազատ մնացին բոլոր այդ անկարգութիւններէն : Օտարաց (Օսմանեանց) ահրապետութեամբը , կ'ըսէ Հաճարձիք , նոյն ժողովրդոց յառաջադիմութիւնը չի դադրեցաւ . . . Իսկ քիչ մը ետքը այսպէս կ'ըսէ նոյն հեղինակը . « Օսմանեան փոփոխութիւնը տասնընթօթերորդ դարոյն մէջ եղաւ : »

Վերը հաստատեցինք թէ Օսմանեանց փոփոխութիւնը , տասն

նրեօթերորդ դարոյն մէջ եղած կարծելով Շաքարձիք կը սխալի ,
և խաղախներուն վկայութիւնը յիշեցինք իբր ապացոյց ասոր :
Ահաւասիկ այս մասին և Քօնիսքի արքեպիսկոպոսին խօսքերը :

Հէդման՝ ի՞նչպէս մէկ կողմէն խաղախները խորհուրդի ժողովեց իրենց պաշտպան Տէրութիւն մը ընտրել տալու համար , և մէկալ կողմէն՝ խորհրդոյ անդին հրաւիրելով զՄօսկովները՝ Ռուսիոյ կայսեր հպատակելու պայմանագիրը գաղանաբար ստորագրեց , բայց զասոնք նկարագրելէն վերջը Քօնիսքի արքեպիստոպոսը , այսպէս կը յարատեէ իր խօսքը . « Երիտասարդ պաշտօնատէրք ու
» խաղախները Օսմանեանց հպատակիլ ուղեցին , վասն զի ապացոյց
» ցիւք հաստատեցին թէ , Օսմանեանք , կը յարգեն միշտ պատե-
» ըրազնող ժողովուրդը , և թէ Տաճկաստանին մէջ Լեհաստանի
» նման , ո՛չ հրէական կալուածք կայ գիւղականաց համար , և ո՛չ
» մեծամեծ տուրք , մանաւանդ թէ , Տաճկաստանի մէջ Ռուսի-
» ոյ նման ո՛չ ստրկութիւն կայ և ոչ վաճառումն մարդկանց
» Ռուսի , ըսին , Հէդմանին ըսածին նման՝ թէ որ առանց օտար
» պաշտպանութեան մը չեմք կրնար կառավարուիլ , այն ատեն ,
» Օսմանեան պաշտպանութիւնը ամենէն աղէկ է . խիստ ապա-
» հով ու շահաւոր պաշտպանութիւն մըն է այն , վասն զի Օս-
» մանեանց ամեն մէկը , իրեն հաւատքէն ՚ի զատ նաև մօրութին
» վրայ երդում ըրած ըլլալով , երդումը չաւրեր ու խօսքը չի փո-
» խեր՝ : »

Ռուսի Տօրէշէնքօին (Օսմանեան Դրան ըրած հպատակութիւ-
նը իր գլխուն առանձին գործողութիւն մը չէր , այլ խաղախներ
րուն ճշմարիտ փախաքին հեռութիւնն էր , զոր բճացուցին
Հէդմանի խորամանկութիւնները :

Վերը ցուցուցինք որ , ընդհանուր խօսելով , Տաճկաստանու
քրիստոնէից յառաջադիմութիւնը տասնըութերորդ դարոյն մէջ
խափանեցաւ , և այն՝ քրիստոնէից պաշտպանութիւնը ստանալու հա-
մար Բէթրպուրկի կառավարութեան մահմետականաց ու քրիս-
տոնէից մէջ ցանած ու հատատած հակառակութեանը պատճա-
ռաւ : Այս ըսածնիս յետագայ ապացոյցները կը հաստատեն :

Ա. Տասնըհինգ , տասնըվեց ու տասնըեօթը դարերուն մէջ

1 Պատմութիւն Քօնիսքի արքեպիսկոպոսի եր . 118 :

Տաճկաստանու քրիստոնէից վիճակը խիստ բարեբաղդ էր , վասն զի օտար Տէրութիւն մը քրիստոնէից ուղղութիւնը չէր պահանջեր : Բ. Տաճկաստանու մահմետական հպատակք՝ իրենց քրիստոնեայ հայրենակիցներուն հետ երկար ատեն քաղցրութեամբ վարուելով , նաև այս վարմունքէն օգուտ քաղելով՝ անշուշտ և տասներութերորդ դարոյն մէջ չէին կրնար իրենց վարմունքը փոխել : Գ. Տաճկաստանու մահմետականաց ու քրիստոնէից մէջ թշնամութիւն ցանողը Բէթրպուրկի կառավարութիւնը եղաւ . և այսպէս ըլլալուն ապացոյցը այն է որ , Օսմանեանց պատմութեանը տասներութ դարոյն գլխաւոր նիւթը՝ Ռուսիոյ կառավարութեան Տաճկաստանի ներքին գործոց միջամուխ ըլլալն է . այսպէս և Մօսկովի պատմութեանը տասներութը դարոյն երևելի մասը՝ Տաճկաստանի մէջ Ռուսիոյ քաղաքականութեան ծաւալումն է :

Օսմանեանց և Ռուսաց խնդրոյն վերաբերեալ ուղիղ անդեկութիւնք յայտնի կը ցուցնեն թէ՛ Օսմանեանց զօրաւոր եղած ժամանակը , քրիստոնեայք օտար պաշտպանութիւն չունենալով յառաջադէմ էին միշտ . ընդհակառակն , երբ Օսմանեանք սկսան արկարանալ ու քրիստոնեայք օտար պաշտպանութիւն ունենալ , այն ատեն քրիստոնէից յառաջադիմութիւնն ալ դադրեցաւ :

Սլաւեանց լեզուներուն օգնութեամբը Օսմանեան պատմութեանը վերաբերեալ անդեկութեանց երկրորդ երևելի հեռուութիւնը այն է որ , Տաճկաստանու Բանդիմաշ և ուրիշ ամեն բարեկարգութիւնք , որոնց ականատես եղանք մենք , և որոնք բոլոր ժողովրդոց հաճութիւնը ունեցան , անոնց ամենն ալ , կ'ըսեմք , օտար կառավարութեանց ստիպելովը եղած բաներ չեն , այլ Օսմանեանց տասնըհինգ , տասնըվեց և տասներութը դարերուն պատմութեանը բնական ու յառաջադէմ ընթացքին հեռուութիւններն են : Շտախարձիք պատմագրին նկարած դէպքերը և ինչաց պատմութիւնը անժխտելի կերպով կը հաստատեն զայս : Գարձեալ այն թանգիմաթը և ուրիշ ամեն բարեկարգութիւնք այնչափ աղէկ

1 Հիմակուան հպատակ քրիստոնէից յառաջադիմութիւնը յայտնի կը ցուցնէ Օսմանեան Տէրութեան ներկայ իմաստուն կառավարութիւնը , և իր ապագայ պայծառութիւնը : Ծանօթ . Թարգ :

յարմար են անդույս ժողովեցանց որ՝ առանց նախապաշարման
 դատողութիւն ընողը շուտով կը հասկընայ թէ անկարելի է որ ու
 տարաց գործքը ըլլան անոնք : Մանաւանդ այն ժամանակը հաս-
 տատեց զասոնք Օսմանեան Տէրութիւնը՝ երբ օտար կառավարու-
 թիւնք գործողութեան կատարեալ ազատութիւն թողուցեր էին
 իրեն :

Երրորդ նիւթը , Տաճկաստանու քրիստոնէից ազատութիւնը
 և ուսումնականութիւնը Ռուսիոյ բնակիչներուն հետ բաղդա-
 տելով , այն է որ , Տէթրպուրկի կառավարութեան՝ Սուլթանին
 հպատակ ըլլող քրիստոնէից պաշտպանութիւնը ուղերուն նպատա-
 կը ուրիշ բան չի կրնար ըլլալ , բայց եթէ նոյն քրիստոնէից ու-
 նեցած ուսումնականութիւնը և ազատութիւնը ջնջել , ինչպէս
 ջնջեց Խաղախներունը և Եհէերունը որոնց պաշտպան անուանած
 էր զինքը , և նոյնպէս կը ջնջէ գեո զանոնք բուն իր երկրին մէջ :
 Թէ որ ինքզինքը կիրթ համարող և ազատ բնակիչներ ունեցող
 երկիր մը՝ օտար երկիրներուն բարեկրթութիւնը և ազատութիւ-
 նը պաշտպանելու իրաւունքը ունինէ , այն ատեն , Տէթրպուրկի
 կառավարութեան բռնութեանը դէմ փոքր Ռուսիոյ և Եհէաս-
 տանու բնակչաց պաշտպանութեան իրաւունքը Օսմանեան Տէ-
 րութեան կը վերաբերի , թէ որ անկախ Տէրութեանց մէջ այս-
 պիսի իրաւունք մը կայնէ , ի . Դուռը այս իրաւունքը ստանալու
 համար կրնայ ցուցնել բոլոր այն գործքերն ու հաշիւները զու-
 րոնք հաստատեցինք մենք հոս :

Բոլոր այս գործողութիւնները ու հաշիւները հաստատելէն
 վերջը զայս կ'ըսեմք որ , Տէրութեանց քաղաքական հաւա-
 սարակչութիւնը պահելու համար Տաճկաստանը որչափ հար-
 կաւոր է նէ Եւրոպիոյ , այնչափ , և կրկին անգամ աւելի հարկա-
 ւոր է այս Տէրութիւնը իւր քրիստոնէաց ժողովուրդները պաշտ-
 պանելու համար այն բարբարոսութեան դէմ , որով մնասել կ'ուզէ
 նոյն ազգերը Տէթրպուրկի կառավարութիւնը : Վասն զի թէ որ
 Մօլտավիոյ , Վլահիոյ , Սրֆի և Բուլղարի բնակիչք յիշեալ կա-
 ռավարութեան պաշտպանութեանը տակ իյնաննէ , այն ատեն
 անշուշտ , ուրիշ նուաճեալ ժողովրդոց ինչ ըրաւնէ , նոյնը կ'ընէ
 և անոնց Տէթրպուրկի Տէրութիւնը , այսինքն այն ազգերուն

բարեկրթութեան գովելի յառաջադիմութիւնը խափանելէն վերջը, Աւրոպիոյ տիրապետելու համար, իւր փառասիրութեանը գործիք մը կ'ընէ զանոնք¹ :

Վերջապէս, Աւստրիայէն ալ, բոլոր Գերմանիայէն ալ աւելի աղէկ պատնէշ մըն է Տաճկաստանը այն համառու սուլթեան դէմ, որ Օրթոտոքսութեան ու համասլաւութեան տակ պահպանելով՝ զԱւրոպիան վտանգել կ'սպառնայ :

Հեղինակ գրոյս Տ.

¹ Ռուսիոյ հպատակ Հայ համազգեաց վիճակը արդարեւ շատ ողբալի է, ըստ որում ասոնք ալ վերոյիշեալ ժողովոցոց նմանին պիտի օր մը: Ծանօթ. թարգմ.:



Р. У.

№

6122